



ՀԱՅԵՐԻՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ
 «PAPÈRE»
 REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE
 ORGANE DES ÉGLISES ÉVANGÉLIQUES ARMÉNIENNES DE FRANCE

Rédaction et Administration :
 7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԱ. Տարի - ՄԱՅԻՍ 1935



11^{me} Année - Mai 1935



Խմբագրական

Պատուենք եւ տարածենք Առողաժաշուենքը

Զ. Բ. Պ.

Հոգ. կեանք

Ս. Հոգիին էութիւնը

J. Studle

Եկեղեցիին կոչումը

Սուրբ Օգոստինոսի խոստովանութիւնները

Թարգ. Զ. Բ. Պուտաբեան

Շնորհաց ծովէն

Վկայութիւնս

Վահան Կարապետեան

Կենաց ածուներէն

Մինչեւ զանիկա գտնէ

Թարգ. Մ. Կ. Պարսամեան

Անձնուէրը

Սամուէլ Պ.

Ս. Գրական ուսումնասիրութիւն

1) Անդրէաս առաքեալ, 2) Փիլիպպոս առաքեալ

Գ. Գ. Խ.

Սերտողութիւն

Կիրակնօրեայ դասերու ներշնչումներ

Կենսագրական

Ճան Ուէսլի

Ազատ Թարգ. Վ. Ս.

Պատանեաց

Օրինակելու արժանի կենսագրական մը

Մանկանց սիւնակ

Մարգուէն սիրտը



ՄՕՐ ՄԸ ՍԷՐԸ

.....

զԱստուած սիրելով՝ զԱյն սիրոյ չեն զրգում. ո՛չ:
«Մակայն Աստուած Իր սէրը զոր մեր վրայ
ունէր, յայտնեց, որ երբ դեռ մեղաւոր էինք,
Քրիստոս մեզի համար մեռաւ: Մեր թշնամի
եղած ատենը Աստուծոյ հետ հաշտուեցանք Իր
Որդւոյն մահովը: Հռով. Ե 6, 8, 10:

Աստուած կը սիրէ մեղաւորները: Աստուած
կը սիրէ քեզ, նա բարի է եւ բարերար: Ինչպէս
որ ես՝ Անոր եկո՛ւր: Նա հիմա քեզ կը սիրէ,
հաւատա Անոր սիրոյն: Այսօրուրէն վստահէ
Անոր սիրոյն որ խաչին վրայ յայտնուեցաւ:
Աստուած Իր Որդին Յիսուս Քրիստոսը քեզի
համար զրկեց, եւ Յիսուս Քրիստոս իր կեանքը
քեզի համար տուաւ:

.....

Սոյն Թերթիկէն ունենալ եւ ցրուել ուզողներ Թող
բարեհաճին դիմել Բանբեր հոգեւոր ամսագրերի խմբա-
գրութեան եւ իրենց պիտի զրկուի ուզուած քանակով:

Հասցէ. — Panpère, c/o H. N. Ghazarossian
7, Rue Papère, Marseille (France)

Թիւ 2

Քանի մը տարիներ առաջ Ֆրանսայի Հարա-
ւային կողմերը սոսկալի հեղեղներ ողողեցին եւ
աւերեցին: Գետերու եւ գետակներու ջուրերը
հեղեղանման անձրեւներէ ուռեցած բարձրացան
եւ ափերը կոխելով հսկայ տարածութեամբ
ցամաքներ ջուրով ծածկեցին եւ անդիմադրելի
կատաղութեամբ մը քշեցին տարին տուններ,
անասուններ, ծառեր եւ ամէն ինչ որ իրենց
ճամբուն վրայ կը գտնուէր: Ջուրերը այնքան
արագութեամբ կը խուժէին որ յաճախ բնակիչ-
ները յանկարծակիի եկած, չէին կրնար փախչիլ
եւ շատեր ալ խեղդուեցան:

Կը պատմուի թէ Թուլուզի շրջակայքը, մայր
մը օրին մէկը ինքզինքը իր 2 պզտիկ զաւակնե-
րուն հետ ուժգնօրէն յորգող ջուրերէն յան-
կարծակիի բռնուեցաւ: Կինը հասկցաւ թէ իրեն
համար ազատումի ո եւ է յոյս չկար: Մարախան
սէրէն քշուած հիանալի անձնուիրութեամբ իր
ամբողջ կորովը գործածեց գոնէ իր զաւակ-
ները ազատելու: Ասոր միայն մէկ փորձ կը
մնար. այն էր լաստ մը յարմարցնել, մանկիկ-
ները խնամքով անոր վրայ կապել եւ ջուրի

յորձանքին թողուլ, զանոնք Ամենակարող Աստուծոյ յանձնելով: Այսպէս ըրաւ եւ դէպի երկինք աղօթք մը բարձրացնելով լաստին վրայ կապուած մանուկները հոսանքն ի վար թող տուաւ, սպասելով անխուսափելի մահուան որ իրեն կ'սպառնար: Տկար եւ անկատար լաստը հոսանքէն քշուեցաւ, բայց քիչ անդին զարնուեցաւ ծառի մը եւ քակուեցաւ: Մայրը սակաւն, գերմարդկային կորովով մը կրցաւ հասնիլ ծառին եւ անոր փաթթուեցաւ յուսահատ ճիգերով: Յետոյ մէկ ձեռքը երկնցնելով կրցաւ բռնել իր զաւակները եւ զանոնք ջուրէն հանելով դրաւ ծառին օմէնէն խոշոր ճիւղին վրայ: Բայց ջուրի յորձանքները ծառն ալ իր արմատներէն քակելով քշեցին տարին:

Այս անգամ ծառը տեսակ մը լաստ եղաւ, որուն ջուրէն դուրս մնացած ճիւղին վրայ մայրը կապեց իր զաւակները, բայց տեսաւ թէ իր մարմնին ծանրութիւնը թողլ չէր տար ճիւղին չուաները ջուրէն դուրս պահել: Հոս ալ մայրական սէրը չվարանեցաւ անգամ մըն ալ ապա հովելու իր զաւակներուն կեանքը, զանոնք ողորմութեամբ առատ Աստուծոյ յանձնեց, իսկ ինքը ծառը թոյլ տալով աներեւոյթ եղաւ

հեղեղներուն մէջ: Երբ ջուրերը պակսեցան՝ մարդիկ գտան այս մանուկները ողջ եւ առողջ վիճակի մէջ:

Մօ'ր մը սէրը: Ո՛հ ի՛նչ մեծ է ան: Մեր սրտերը չյուզուեցա՞ն այս պատմութիւնով: Մենք պատրաստ չե՞նք ըսելու, «Միթէ կինը իր կաթնկեր մանուկը կրնա՞յ մոռնալ, այնպէս որ իր որովայնին ծննդեանը վրայ չգթայ»: Ես. Խթ 45: Աւա՛ղ, կան մայրեր որոնք կրնան իրենց զաւակները մոռնալ: Աստուած իր խօսքին մէջ այսպէս կ'ըսէ. «Թէեւ անոնք մոռնան, բայց Ես քեզ պիտի չմոռնամ»:

Սուրբ Գիրքը մեզի կը պատմէ ուրիշ սիրոյ մը պատմութիւնը աւելի մեծ քան այս մօրը սէրը իր զաւակաց համար: Այս մայրը իր կեանքը կամովին իր զաւակներուն համար զոհեց՝ բայց Յիսուս Բրիստոս, ինք, Աստուծոյ Որդին իր կեանքը կամովին տուաւ փրկանք ըլլալու անհաւատ մեղաւորներուն, որոնք նոյնիսկ Աստուծոյ գոյութեան չեն հաւատար եւ թշնամի են Անոր, հետեւաբար յաւիտենական մահուան դատապարտուած են:

«Յարմար ժամանակին Բրիստոս ամբարիշտներուն համար մեռաւ»: Մարդիկ նախ իրենք

Հոկ արիւնիդ վստահելով,
Դառն Աստուծոյ, Քեզի կուզամ:

3 Ինչպէս որ եմ շատ տանջուած
Ու բազմաթիւ մեղքով պատած,
Ասդին անդին միշտ տատանած,
Դառն Աստուծոյ, Քեզի կուզամ:

4 Ինչպէս որ եմ, Դուն, Տէր, գիտես,
Բոլոր մեղքերս կը ջնջես,
Ազատտ հոգիս Դուն կը սրբես,
Դառն Աստուծոյ, Քեզի կուզամ:



.....

Սոյն Թերթիկէն ոչնենալ եւ ցրուել ուզողներ Թող
բարեփաճին դիմել Բանբեր հոգեւոր ամսամերթի խմբա-
գրութեան եւ իրենց պիտի ղրկուի ուզուած քանակով:

Հասցէ. — Panpère, c/o H. N. Ghazarossian
7, Rue Papère, Marseille (France)

Թիւ 1

ԲԱՑԱՐՁԱԿԱՊԷՍ ՁՐԻ ՊԱՐԳԵՒ ՄԸ

ԲԱՅՅ... ԱՆՈՆՑ ՈՐ ԶԱՅՆ Կ'ԸՆԴՈՒՆԻՆ

Սիրոյ այս մեծ պարգեւը ընդունած ես. եթէ
ոչ, չե՞ս ուզեր զայն հիմա ընդունիլ:

«Աստուած մեզի յաւիտենական կեանք
տուաւ ու այս կեանքը Անոր Որդւոյն մէջ է:
Ան որ Որդին ընդունած է՝ կեանք ունի, եւ ան
որ Աստուծոյ Որդին ընդունած չէ, կեանք չունի».
Ա. Յովհ. Ե 11—12:

«Ան որ կ'ուզէ կենաց ջուրը ձրի առնէ».
Յայտ. ԻԲ 17:

«Աստուած էր, որ Քրիստոսով աշխարհս իրեն
հետ հաշտեցուց... Վասն զի Աստուած զԱնիկա
(Յիսուս Քրիստոսը) որ մեղք չէր գիտեր, մեզի
համար մեղք ըրաւ, որպէսզի մենք Անոր միջո-
ցով Աստուծոյ արդարներն ըլլանք».
Բ. Կոր. Ե 19—21:

«Ով երկրի բոլոր ծայրերը, Ինձի նայեցէք
որպէս զի փրկուիք, քանզի Նա եմ Աստուած, եւ
Ինձմէ ուրիշ չկայ».
Եսայ. ԽԵ 22:

«Եւ ուրիշ մէկով փրկութիւն չկայ, վասն զի

Անկէ զատ ուրիշ անուն մը չկայ երկինքի տակ
մարդոց մէջ տրուած, որով կարող ըլլանք
փրկուիլ»։ Գ. Առաք. Դ 12։

Նայէ՛, ո՛վ վրդովեալ հոգի, նայէ՛ Գողգոթային
վրայ մեռնողին —

Քրիստոսի, որ խաչին վրայ բարձրացած է։

Հոն է քու Փրկիչդ եղբայրս, նայէ՛ Անոր,

Մէկ նայուածք քեզ կը փրկէ.

Նայէ եւ հաւատա։

Կեանք եւ թողութիւն Գողգոթայէն կ'իջնեն,

Խաչին նայէ։

«Ան որ ինծի կուգայ, բնաւ դուրս պիտի չը
հանեմ»։ Յովհ. 2. 37։

«Յիսուս ըսաւ անոր, «Ես եմ՝ ճամբան ու
ճշմարտութիւնը եւ կեանքը. մէկը Հօրը քով
չգար՝ եթէ ոչ Ինծմով»։ Յովհ. ԺԴ 6։

«Դուք չէք ուզեր ինծի գալ, որ կեանք ունե-
նաք», ըսաւ Յիսուս. Յովհ. Ե 40։

Խաչին վրայ խեղճ աւազակն,
Երբ ան աղբիւրն տեսաւ,
Չարչարանացը ժամանակ,
Խիստ շատ ուրախացաւ։

Ասոր նման թէպէտ ըլլաս,
Շատ չարագործ դուն ալ,

Նոյն աղբիւրին ջրովն կրնաս,
Հուացուիլ մաքուր ըլլալ։

«Ան որ Որդւոյն կը հաւատայ, յաւիտենական
կեանք ունի, եւ ան որ Որդւոյն չհնազանդիր,
անիկա կեանք պիտի չտեսնէ, հապա՛ Աստուծոյ
բարկութիւնը անոր վրայ կը մնայ»։ Յովհ. Գ 36։

«ՉԱնիկա Աստուած Իր աջ ձեռքով Առաջնորդ
ու Փրկիչ ըլլալու բարձրացուց... ապաշխարու-
թիւն եւ մեղքերու թողութիւն տալու»։ Գ. Առաք.
Ե. 31։

«Թող ամբարիշտը իր ճամբայէն, ու անօրէն
մարդը իր խորհուրդներէն հրաժարի, եւ Տէրոջը
դառնայ, ու Անիկա պիտի սղորմի անոր, ու մեր
Աստուծոյն, վասն զի Անիկա առատապէս կը
ներէ»։ Եսայ. ԾԵ 7։

«Հապա մենք ի՞նչպէս պիտի ազատինք՝ եթէ
անհոգ ըլլանք այնպիսի մեծ փրկութենէ մը».
Եբր. Բ 2։

1 Ինչպէս որ եմ մեղքով լեցուած,
Խեղճ մեղաւոր ու կորսուած,
Աչքերս դէպի Փրկիչդ ուղղած,
Դառն Աստուծոյ, Քեզի կուգամ։

2 Ինչպէս որ եմ չսպասելով,
Հոգիս սրբել պարապ յոյսով,

ԲԱՆԲԵՐ

Արժնյի՛ր Կուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելն
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

Քանզի ալ աս
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Ուրիմ՝ն ա՛լ վախճանք, որ չըլլայ Թէ
Անոր հանգիստը մանկու խոտմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Երբ. Ժ. 37

ԺԱ. ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ 1955

ԹԻԻ 5

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՊԱՏՈՒԵՆՔ ԵՒ ՏԱՐԱԾԵՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶՐ (ՀՐԱՒԻՐ ՄԸ ՀԱՅ ԱԶԳԻՆ)

Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան 1500-ամեայ Յորելեան տարին, մեծ ոգևորութեամբ ողջունուեցաւ և արտակարգ ուրախութիւն պատճառեց բոլորիս: Եկեղեցական եւ զբաղմունքային հեղինակութիւններ ինչպէս նաեւ ազգային ղարմաղան կաղմակերպութիւններ գործի լըծուած են կրօնական արարողութիւններով և մշակութային եւ հայրենասիրական հանդէսներով արժանավայել կերպով տօնելու Յորելեանը:

Ոչինչ աւելորդ է: Տասնըհինգ դարերէ ի վեր հայը Աստուածաշունչը ունի իր մայրենի լեզուով եւ անհաշուելի են ասկէ յառաջ եկած բարիքները: Հայ գրերու գիւտը եւ հայերէնի զբաղմունքն մշակումն ու զարգացումը, իսկ «Յազունի» թարգմանութեանց»-ն ելլող Աստուածային հզօր ներգործութիւնը ու անոր կենսատու լոյսը սրբազործեցին, զարգացուցին ու պահպանեցին ճշմարիտ հաւատքի բոցը հայոց մէջ:

Կարծէ մեծ ցնծութեամբ տօնել Յորելեանը, երախտագէտ յարգանքով մը ծնելով Սահակի և Մեսրոպի հաւատքին, տիտանական ջանքին ու յարատեւ սիրոյն առջեւ եւ օրհնելով զԱստուած, հայոց շնորհած մեծ պարգեւին համար:

Այս առթիւ պէտք է սակաւ յիշել դժնդակ իրողութիւն մը որ չի կրնար խափանուիլ ո՛չ հանդէսներու փայլով, ո՛չ ալ ճառերու զոռումով: Աստուածաշունչը չունի հայոց մէջ այն տեղը որ ունենալու էր. ուստի եւ մեր մէջ չի կրնար կատարել այն բարերար դերը որուն համար Աստուած եւ թարգմանիչները տուին զայն մեզի: Սիրով խոստովանինք այս ձախողութիւնը: Մեծ զանգուածը չի ճանչնար Ս. Դիրքը: Կրօնական եւ բանասիրական շրջանակներէ դուրս շատ քիչ ծանօթ է այն: Յորելեան տօնակատարութեանց

հետ էական է որ քննուի Աստուածաշունչի տարածման հարցը եւ գործնական մէթոտներ մշակուին իրականացնելու համար այս ծրագիրը:

Ալ ժամանակ է որ արմատախիլ ընենք այն թխալ գաղափարը թէ Աստուածաշունչը ժողովուրդին համար չէ: Ս. Դիրքի գործածութիւնը ո՛չ մէկ եկեղեցւոյ կամ կղերի մենաշնորհը կարելի է նկատել: Ան բոլորի՛ն համար է, որպէսզի իբրեւ Պատգամ Աստուծոյ, սորվեցնէ, յանդիմանէ, ուղղէ հաւատացեալը եւ զայն ամէն բարի գործի պատրաստէ: Այս՝ ոչ մէկ իմաստով կը խաչաձեւէ եկեղեցիին պաշտօնը, որուն պաշտօնեաները կոչում ունին իրենց հոգեւոր փորձառութիւնը եւ մասնագիտական հմտութիւնը ի սպաս դնելու ժողովուրդին հոգեւոր շինութեան:

Եւ ոեւէ ժամանակէ աւելի հիմա չէ՞ որ ՍԿԻԼՈՒՔԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ կը կարօտի Աստուծոյ խօսքին: Արդեօք միշտ լաւ կը կշռենք այն բարոյական վտանգները, որոնք կը հարուածեն եւ կը սպառնան ի սպառ փճացնել ժողովուրդին, մանաւանդ նոր սերունդին բարոյական ուժերը եւ հոգեւոր կեանքը: Անշուշտ անմահ հոգիներու ներկայ երջանկութեան եւ յաւիտենական կեանքին կապուած հարց մըն է այս:

Այսօր ո՛չ մէկ հոգեւոր առաջնորդ, ո՛չ մէկ բարոյագէտ, ո՛չ մէկը որ խղճի մտօք ինքզինքը ազգաշէն գործի տուած է՝ կրնայ անտեսել, որ հակառակ կարգ մը քաջալերական երեւոյթներու, հայութիւնը խորապէս ազդուած է տիրող մթնոլորտէն: Հաւատքի, սրբութեան եւ առաքինութեանց պակասը եւ անոնց հանդէպ բռնուած արհամարհական վերաբերումը կը կազմէ վտանգ մը որ լուրի եւ աննշմար քայլերով մահուան կա-

ռաջնորդէ, զի ազգային մեղք՝ ազգային կործանում կը նշանակէ:

Տեսնողները կը փորձեն դարմանել: Բայց չը խաբուինք: Մեր բոլոր ճիգն ու նուիրումը չեն կրնար օգնել մեզի եթէ ողնաշարը ախտաւորուած է: Ուրեմն որո՞ւ կրնանք վստահիլ բարեւար առաջնորդի դերը: Մեր ձեռքն ունինք արդէն այդ հզօր ազգակը: Ի՞նչ բան կրնայ գերազանցել ներշնչեալ Աստուածաշունչը: Իր ուսուցումները սուրբ են, վճիռները անխորտակելի, ան Աստուծոյ ձայնը կը բերէ մարդոց, սորվեցնելով մեղսագործ մարդոց կորուստը, բայց հաւատացեալին կարելի փրկութիւնը: Զայն կարդացողը իմաստուն, անոր հաւատացողը ապահով ու անոր հնազանդողը սուրբ կ'ըլլայ: Անիկա կ'առաջնորդէ, կը կերակրէ եւ կը քաջաւերէ հոգին:

Աստուածաշունչը մարդը ուղղակի Փրկչին կը տանի: Անոր առաջնորդութեան եւ լոյսին մէջ ոչ մէկ սոտեր կայ: Իրաւամբ Աւետարան կոչուած է անոր երկրորդ մասը, զի մարդուն կէ՛ ԲԵՐԷ՛ իր մտերիմ եւ անլուծելի ցաւերուն ազատութիւնը: Մեղսագործ հոգի մը կը խռովի, կը խարխափէ, կը շուարի, կ'անձկայ: Մարդիկ շատ յաճախ օգնելու տեղ աւելի կը շուարեցնեն զինքը, բայց Աստուածաշունչը պանդուխտին ցուպը ու ճամբորդին կողմնացոյցն է, որ փնտոողը Փրկչին կը տանի: Ան վստահող ընթերցողին ցոյց կուտայ Աստուծոյ սէրը, Փրկչին չարչարանքը, Գեթսեմանին եւ Խաչը: Կ'ըսէ որ Քրիստոս մեղաւորներուն համար մեռաւ, թէ Անոր վերքերը կը բուժեն խոցեալ հոգին, թէ Որդոյն արիւնը քաւութիւնն է մահառիթ մեղքին: Կը յայտնէ թէ ուրիշ միջոց չկայ հանգչեցնելու խռոված խիղճ մը, ո՛չ մէկ դարման բժշկելու որդնահար անցեալ մը, ո՛չ մէկ միջոց ձեռք բերելու ներման խաղաղութիւնը, ո՛չ մէկ ուրիշ կարելիութիւն նոր ու յաղթական կեանք մը ապրելու: Աստուածաշունչը այս բոլորը կարելի կ'ընէ, զի Սուրբ Գիրքերը «Կարող են իմաստուն առնել զքեզ ի փրկութիւն ի ձեռն հաւատացնող որ Քրիստոս Յիսուս»:

Ալ ինչո՞ւ չտարածել Աւետարանը, ինչո՞ւ ամէն ոք չունենայ եւ չկարդայ զայն՝ ճանչնալու համար զԱստուած մտաւոր յարումէն բարձր, հաւատքի եւ սրտի խոր գիտութեամբ մը, ազատ ըլլալու համար մեղքի ուժէն եւ Աստուծոյ շնորհքով ապրելու համար Աստուածաշունչին պահանջած քրիստոնէական կեանքը:

Յորեւեան տարին վեր պիտի հանէ մեր

Թարգմանութեան արժէքը եւ հարկաւ նոր սէր եւ յարգանք պիտի տածուի անոր համար: Թեւեաւ սակայն ոմանք ամբանան մեծամտութեան բարձունքները, խորհելով որ իրենց բարոյական տեսողութիւնը բաւ է ուղղելու իրենց կեանքը: Սակայն մարդկային սրտին պատմութիւնը շատոնց խոստովանած է թէ մարդը ինքնին չունի իրեն պէտք եղած լոյսը, իսկ դաստիարակութեամբ իր ձեռք բերածը դարձեալ անբաւարար է զինքը Աստուածահաճոյ սրբութեան մէջ կեցընելու: Մարդուն սրտին թշնամին մարդուն սրտէն մեծ է: Պայքարողը սուրի կը կարօտի: Հոս խղճի ձայնն իսկ ԿՐՆԱՅ ԿԵՂՏՈՒԻԼ եւ բռնաբարուիլ. ահա թէ ինչու ըսուած է թէ «Աւետարանը խղճմտանքին խիղճն է»:

Տօնէնք Յորեւեանը, բայց զանց չառնենք այս կարեւոր իրողութիւնը: Աւագ պարտականութիւնը Քրիստոսի եկեղեցիին կը վերաբերի: Ժամանակ է որ նա թօթափէ իր անտարբերութիւնը զի «Բանն Աստուծոյ ոչ եթէ կապեալ ի. ցէ»: Հերթ'ք են անոր դարաւոր շղթաները. արձակեցէ՛ք զայն: Բազում մարտիրոսներ իրենց արիւնով պաշտպանած են զայն. չանպատուենք թաղուհի թարգմանութեանցը, զայն միայն Յորեւեան տարիով մը պատուելով, փոխանակ զայն թագաւորեցնելու «Գրքի ժողովուրդին» մէջ:

Թող տարածուի Աւետարանը, թող Հայ Ազգը կրկին եւ կրկին լսէ անոր ազգարար ձայնը, թող Գրքին լոյսը բնաւ չպակսի մեր ազգային շաւիղէն: Մանաւանդ թող Ազգը աչքերը վերցընէ իր պաշտելի Փրկիչ Տէր Յիսուս Քրիստոսին, Որուն Սէրն ու Շնորհքը ի սպառ կը քաւեն մեզի: Այս գիտութիւնը, այս տեսիլքն է որ իր ահաւոր թշնամիէն մեղքի իշխանութենէն պիտի փրկէ Հայ ժողովուրդը, եւ Աստուածաշունչը իրեն սահմանուած դերը կատարած պիտի ըլլայ մեր մէջ:

Զ. Բ. Պ.

Մենք չենք ձգեր Սուրբ Գիրքը,
Աստուածաշունչ Մատեան.
Քանզի մանկանց է առաջնորդ,
Ծերոց ալ գաւազան:

ՀՈԳԵԻՈՐ ԿԵԱՆՔ

ՍԲ. ՀՈԳԻԻՆ ԷՈՒԹԻՒՆԸ

○○○○○

Սուրբ Հոգւոյն էութեան եւ գործունէութեան նկատմամբ հաւատացեալ շրջանակներու մէջ նուազ սուրբգրական լոյս կայ. այդ է պատճառը որ մէկ կողմէն յաճախ կը խօսուի եւ կը գրուի «երկրորդ օրհնութեան» մը մասին, զոր կ'ընդունուի Հոգիին մկրտութիւնովը: Իսկ միւս կողմէն ուրիշներ վատառողջ գաղափարներ արտայայտելու վախէն զրդուած կը քաշուին Սուրբ Հոգիին արժանավայել տեղն ու յարգանքը տալու:

Աստարակոյս յայտնի է որ աշխարհի որդիները Աստուծոյ Հոգիին բաները չեն հասկնար, քանզի «չեն օննչնար զԱնիկա», բայց Տէրոջը եկեղեցին, որ կանչուած է Հոգիով քալելու (Փաղ. Ե. 25) պէտք է Ամենասուրբ Երրորդութեան երրորդ անձին մասին վկայել գիտնալ: Ինչ որ զիտենք կը խօսինք (Յովհ. Գ. 11):

Ճիշդ այս մեծ փորձութեան վայրկեանին, որ երկրագունդիս վրայ եկած է, պէտք ունինք լուսաւոր աչքերու հոգիները քննելու համար: Այս բաները կրնայ ընել այն որ Հոգիին էութիւնը անձամբ կը ճանչնայ:

Աստուծոյ խօսքը Ս. Հոգիին մասին կը խօսի հինէն ի վեր, ստեղծագործութեան պատմութեան մէջ իսկ, ուր կ'ըսուի, «եւ Աստուծոյ Հոգին ջուրերուն վրայ կը շարժէր» (Ծննդ. Ա. 2): Ուստի ստեղծագործութեան մէջ Անոր կը վերագրուի գաղտնի կենսատու գործունէութիւն մը: Շատ էական եւ հիմնական նշանակութիւն ունի զիտնալ թէ Ս. Հոգին ամենահին ժամանակներէ ի վեր գործակից էր: Երբ Տէրը ստեղծագործութեան պսակը եղող մարդը ստեղծեց, անոր շունչ ըլլալու համար տուաւ Իր կենդանութեան շունչը (Ծննդ. Բ. 7), որովնա եղաւ Աստուծոյ նմանող ստեղծուած մը, որուն մէջ ամէն ինչ՝ մարմին, շունչ եւ հոգի կը գտնուէր Ս. Հոգիին գերիշխանութեան տակ եւ կը կազմէր այն ներգաշակութիւնը զոր մենք անմեղութիւն կը կոչենք: Մարդուն անկումը իրականին մէջ Սուրբ Հոգիէն կտրուիլ կը նշանակէ: Այդ ատենէն սկսեալ իմացականութիւն, զգացականութիւն եւ կամք փոխան Սուրբ Հոգիին՝ մարմնոյ գերիշխանութեան տակ ինկան: Հոգին ի զուր ջանաց ագգարարութիւններով մարդկութիւնը անսաստել:

Աստուած Ինք ստիպուեցաւ ըսել թէ «Իմ Հոգիս միշտ մարդու վրայ պիտի չմնայ, քանզի անիկա՝ մարմին է» (Ծննդ. 2. 3): Այս վիճակին ի հետեւանա ջրհեղեղը եկաւ աշխարհի վրայ, եւ որովհետեւ ամէն տեղ Ս. Հոգիին ալ զիմադարձութիւն կ'ըլլայ, Աստուծոյ դատաստանները ներկայ մարդկութեան վրայ ալ շուտով պիտի գան:

Սրբազան գրութեանց համաձայն, ոչ միայն Աստուածային ազդեցութեան մը կամ Հոգիի գործութեան մը հետ գործ ունինք, հապա լնծի մը հետ, որ Աստուծոյ մարդոց մասին ունեցած բոլոր գրագիրներուն մէջ բարձրագոյն դեր մը կը կատարէ: Հայրը Իր Որդին տուաւ մեզի որպէս Փրկիչ: Որդին Հօրմէն զրկեց Սուրբ Հոգին անոնց վրայ որոնք հաւատացին Իրեն (Յովհ. ԺԵ. 26): Պենտեկոստէէն վերջն էր որ անոնք վերէն Ս. Հոգիէն գործութիւնը ընդունելէն յետոյ կրցան առաջին անգամ ըլլալով վկայել Յիսուսի անունը, որուն հաւատալով կրնային մարդիկ փրկուիլ (Գործ. Դ. 12):

Ճշմարտութեան Հոգին Պենտեկոստէին շրջաւ մեզի ամէն ատեն մարդկութեան աչքերը բացաւ մեղքի, արդարութեան եւ դատաստանի համար (Յովհ. ԺԶ. 6): Երբ նա մարդկային գործիքներ գործածեց, գործածեց միայն Աստուծոյ մարդիկ, որոնց մէջ Ինք կը բնակէր, որոնք նաեւ Հոգիէն շարժուած խօսեցան (Բ. Պետ. Ա. 21): Զգաստարակուած աշակերտները երբեք բան մը չպիտի կարենային կատարել աշխարհի վրայ առանց այն Մխիթարիչին որ իրենցմով Յիսուսի համար կ'ը վկայէր (Յովհ. ԺԵ. 26): Միայն այն ատեն երբ մարդիկ բոլորանուէր իր ազդեցութեան եւ գերիշխանութեան ենթարկուեցան, այն ատեն միայն տեղի ունեցան հրաշքեր, արթնութիւն, ապաշխարութիւն եւ սրբութիւն:

Յաւալի է որ յաճախ Հոգիին էութենէն եւ գործունէութենէն աւելի մարդկային նախանձախնդրութիւնն ու գիտութիւնը առաջ կ'անցնին, որոնց կը պակսի ճշմարիտ օժումը: Աստուծոյ գործը մարդկային հոգեկան բարի կամեցողութեամբ եւ որոշումներով կատարել կ'ուզուի, բայց ճշմարտութիւնը նոյնը կը մնայ, «Զօրութիւնով չէ եւ ուժով չէ, հապա Իմ Հոգիովս» (Զաք. Դ. 6): Այս կերպով անա կարելի է բացատրել Աստուծոյ եկեղեցիին աղքատ վիճակը: Ս. Հոգին հակառակ Ս. Գրական վարդապետութեան, Աստուծոյ գաւազան կեանքին մէջ դեռ չգրաւեր այն տեղը որ Իրեն կը վերաբերի, ըլլայ խօսքի սպասարկութեանց եւ կամ Աստուծոյ եկեղե-

ցիին մէջ: Ս. Հոգիի էութեան նկատմամբ պակաս լոյս ունենալով է որ շատեր անորոշութեան մէջ են եւ անզաղար իյնալ ու ելլելը երբեմն Աստուծոյ զաւակներու համար բնական բան մը դարձած է, քանզի իրենք չեն գիտեր Հոգիին յաղթական զօրութիւնը, որ ոչ միայն զմեզ կը նորոգէ, եւ մեզի որդեգրութեան համար վկայութիւն կուտայ Հոգ. Բ. 16ի համաձայն, հապա, նաեւ կը կնքէ զայն փրկութեան օրուան համար (Եփես. Դ. 30), այն կանխագոյն իրողութեամբ թէ «Հոգիին օրէնքը մեզ Քրիստոսով կենդանացուց, մեզ ազատ ըրաւ մեղքի ու մահուան օրէնքէն»: Միայն հոն ուր մարդ սորված է Հոգիով մարմինին գործերը սպաննելու, կարելի է Հոգիով քալել (Գաղ. Ե. 25): Սրբութիւնը Հոգիին ամենաներքին էութիւնն է որ մարմինի, շունչի եւ հոգիի ամբողջական նուիրումը տեղի կ'ունենայ, հոն երեւան կուգայ Աստուծոյ բնակութիւնը Հոգիին միջոցով (Եփես. Բ. 22): Գլխաւոր փնդիրը այն չէ թէ ես Աստուծոյ հոգին ունիմ, հապա որ Ան զիս քողորովին իր գերիշխանութեան տակ առնած է: Ուստի գլխաւոր գիծը չէ որ մենք Հոգիին պարգեւներուն տիրանանք, ինչպէս կը պնդեն Պենտեկոստէականներ, կամ նեղութեանց մէջ յուշատետրի կամ մատիաի դիմենք, ինչպէս Օքսֆորտեաններու մէջ սովորութիւն է, հապա քալենք անընդհատ լուսոյ մէջ, այսինքն ներքին մարդուն մէջ կատարեալ գիտակցութեամբ եւ Աստուծոյ մեր մէջ բնակելովը Ս. Հոգիին միջոցաւ (Յովհ. ԺԴ. 19):

Ս. Հոգիին էութիւնը կ'արտայայտուի անով ալ, որ մեզի պատշաճօրէն մոլորք ընել կը սորվեցնէ եւ որ ամենալաւ կերպով անբարբառ հառաչանքներով մեզի համար բարեխօսութիւն կ'ընէ, ինչ որ Աստուծոյ հաճելի է (Հոգ. Բ. 26-27):

Երբ մենք Աստուծոյ ներկայութեան կը մօտենանք, արժէք ներկայացնողը չէ հոն տրամաբանական եւ դեղեցիկ շարահարուած խօսքեր, այլ Հոգիին միջոցաւ եղած խնդրանքն ու աղաչանքը (Եփես. 2. 18): Այս է լուսած աղօթքին գաղտնիքը, եթէ Յիսուսի խօսքերը մեր մէջ մնան, այն ատեն անոնք մեզի համար իրականութիւն կ'ըլլան, Յիսուսի խօսքը «Ինչ որ Իմ անունովս խնդրէք, պիտի կատարեմ»: (Յովհ. ԺԴ. 13):

Ս. Հոգիին էութեան ուրիշ նշան մըն ալ սէլն է: Իր մէջ մարմնացած է Հօրը սէրը առ Իր Որդին եւ Անոր միջոցաւ առ մարդկութիւնը: Հոգին մղեց Յիսուսը սիրոյ գործին որուն համար Ինքը օծուեցաւ մկրտութեամբ, եւ նոյն Ս. Հոգիով ինքզինքը զոհեց (Եբր. Թ. 14): Եթէ Աստու-

ծոյ սէրը մեր սրտերուն մէջ տարածուած է Հոգւոյն Սրբոյ միջոցաւ, (Հոգ. Ե. 5) այն ատեն աշխարհ կը տեսնէ թէ մենք Անոր աշակերտներն ենք: Այդ կերպով միայն կրնանք ճանչնալ եւ ճանչցնել ուրիշներու թէ Աստուծոյ Հոգիին էութիւնը մեր անհատական էութիւնը եղած է:

J. STUDLE

J. Studle Փրանսահայ եկեղեցիներէ ոմանց ծանօթ Աստուծոյ մէկ ծառան է, Քրիստոսի գալտեան վառ սպասողներէն մէկը, որ A. C. O. ի վարչական կազմին ալ կարեւոր անդամներէն է, որ իր հաւատքովն ու աղօթքովը եւ փորձառութեամբ մեր միսիոնին սիւներէն կը կազմէ: Իրմէն խնդրած ենք որ յաճախ գրէ «Բանբեր» ընտանիքին իր հոգեւոր փորձառութենէն:

ԵԿԵՂԵՑԻՆ ԿՈՉՈՒՄԸ

Յինի կ'ըսէ, «Գլխաւոր պատճառը որուն համար Աստուած ապաշխարած քրիստոնեաները այս աշխարհի մէջ ողջ կը պահէ, այն է թէ՛ անոնք կարենան զօրութի կրակէն մեղաւորները յափշտակելով ազատել: Եթէ անոնք այս գործը չեն ըներ՝ աւելի լաւ պիտի ըլլար իրենց համար որ մեռած ըլլային»:

Այս ուսուցումը տուէք նոր ապաշխարածներուն անմիջապէս որ անոնք Աստուծոյ թագաւորութեան մէջ կը մտնեն: Անոնց ընելիք առաջին գործն է երթալ եւ հոգիները փրկել: Եկեղեցին բոլորովին սիւալ ճամբայ բռնած է իր անդամները յառաջացնելու մէջ: Շատ յաճախ մենք ջանացած ենք եկեղեցին սրբութեան առաջնորդել՝ առանց անոր գործ մը տալու: Բայց սրբութիւնը կը կայանայ Աստուծոյ հնազանդելուն մէջ եւ քրիստոնեաները յառաջացնելու միակ միջոցն է անոնց իւրաքանչիւրին իր ընելիք գործը տալ:

Նայեցէք մեծ եկեղեցիներուն, ուր ամէն կիրակի 5-700 անդամներ իրենց պատուելիին քարոզը լսելով կը զոհանան: Եթէ անոնց չսորվեցնենք հոգիներու փրկութեան համար բան մը ընել, անոնք երբեք սուրբեր պիտի չըլլան:

Յիսուս Քրիստոս ռեզեց որ Իր աշակերտները իրեն գործակիցներ ըլլան մեղաւորներու փրկութեան գործին մէջ, ահա թէ ինչու այս գործին համար Աստուած հրեշտակներ չգրկեց:

ձողիներու փրկութեան համար աշխատելը սրբութեան հասնելու անհրաժեշտ միջոց մըն է: Երբ եկեղեցին այս գործին մէջ կը մտնէ, նա Քրիստոսի հետ միացած կ'ըլլայ Անոր զգացումներուն եւ չարչարանացը մէջ: Ո՛հ, ե՛րբ պիտի գայ այն օրը որ եկեղեցին ինքզինքը իբր միսիոնարական մարմին մը նկատէ: Եթէ ան այս նպատակին համար ապրի եւ գործէ, ան պիտի արագացնէ մարդկութեան փրկագործութեան վերջին մեծ օրը:

Քրիստոնեայ, եթէ դուն չես կրնար երթալ և հեռուն գործել, ինչո՞ւ համար քու ընտանիքիդ մէջ միսիոնար չես ըլլար: Եթէ չափագանց տրկար ես նոյնիսկ քու սենեակէդ դուրս ելլելու, քու միջավայրիդ մէջ միսիոնար եղիր: Քու տանդ անդամները կանչէ եւ անոնց համար միսիոնար եղիր:

ձողիներ վաստկողը իմաստուն է» (Առակ. ԺԱ. 30):

ՍՈՒՐԲ ՕԳՈՍՏԻՆՈՍԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ԳԻՐՔ Բ. ԳԼՈՒԽ 4

ԳՈՂՈՒԹԻՒՆ

Գողութիւնը քու աստուածային օրէնքովդ դատապարտուած է Տէր, նաեւ մարդոց սրտին մէջ գրուած այն օրէնքով՝ որ իրենց անօրէնութիւնն իսկ չկրնար աւելի: Ո՞ր գողը յօժարութեամբ կը թուլատրէ կողոպտուիլ: Ո՞ր հարուստը կը ներէ անձկութենէ մղեալ փորձուածին: Լա՛ւ ուրեմն, ես գողնալ ուզեցի եւ գողցայ առանց անհրաժեշտութեան, առանց կարիքի, արդարութեան հանգէպ զգուանքով, անօրէնութեան լեցունութիւնով, զի գողցայ այն բանը, որմէ արգէն աւելի լաւը եւ առատօրէն ունէի, եւ ո՛չ թէ գողութեամբ իմ ցանկացած առարկաս, այլ բուն իսկ գողութեան մեղքն էր որ վայելել կ'ուզէի:

Մեր այգիին մօտերը պտղալից խնձորենի մը կար, որոնք ո՛չ համի եւ ո՛չ ալ գեղեցկութեան հմայքն ունէին: Պզտիկ ստահակներու խումբ մը կէս գիշերուայ մօտ — խաղերնիս մեր անիծեալ սովորութեան համեմատ մինչեւ այդ ժամը երկարելէն յետոյ — զացինք այդ ծառը թօթկելու եւ մերկացնելու: Բեռներով հետերնիս տարինք, ո՛չ թէ կոչունք մը սարքելու (եթէ նոյնիսկ քանի մը հատ կերանք ալ) հապա խոզերուն նե-

տելու: Պարզապէս արգիլուածը ընելու հաճոյքը վայելեցինք:

Ահա այս սիրտը, ո՛վ Աստուած, այս սիրտը գոր Դուն մեղքանալով տեսար անդունդին յատակը: Ահա այս սիրտը թող քեզի ըսէ թէ ի՞նչ էր դժուար հոն փնտռել գնաց ձրիօրէն վատթարաւալու, չարասիրութեան իբր պատճառ նոյն ինքն չարասիրութենէն տարբեր բան մը չունենալով: Թէեւ սոսկալի սիրեցի զայն, սիրե՛ցի կորսուելը, սիրե՛ցի իմ ախեղծութիւնս, ո՛չ թէ զիս ախեղծ ընող առարկան, այլ բուն իսկ ախեղծութիւնս, սիրեցի՛ զայն: Պղծուած հոգի, որ իր կործանման համար նեցուկէդ բաժնուած, իր ամօթին մէջ՝ ամօթէն զատ՝ ալ ուրիշ բանի համար ախորժակ չունի:



ԳԼՈՒԽ 6

Մեղքերուն մէջ աստուածային կատարելութեանց կեղծ նմանողութիւն մը կայ

Ուրեմն քու մէջդ ի՞նչ բան սիրեցի, ո՛վ իմ 16 տարիներուս գիշերային յանցանքը եղող դժբախտ գողութիւն: Դուն գեղեցիկ չէիր, եւ նոյնիսկ կողոպտու մ'ըլլալով դուն բա՛ն մըն ես որպէսզի խօսիմ քեզի:

Մեր գողցած պտուղները գեղեցիկ էին, վասնզի Քու գործերդ անսահման գեղեցկութիւն են ո՛վ ամէն բանի Արարիչը բարին Աստուած: Ո՛վ գերագոյն Սեփականութիւն եւ իմ իսկական Սեփականութիւնս: Այդ պտուղները գեղեցիկ էին, բայց իմ թշուառ հոգիս անոնց չէր որ կը ցանկար, ես լաւագոյնները առատօրէն ունէի, ուստի զանոնք միայն գողնալու համար քաղեցի, քանզի անմիջապէս նետեցի զանոնք, վայելելու համար անօրէնութիւնս, իմ միակ վայելածս, միակ ուրախութիւնս: Երբ անոնցմէ մի քանին բերնիս կը մօտեցնէի, միայն յանցանքիս համը կը ճաշակէի:

Եւ հիմա ո՛վ իմ Տէր Աստուածս, կը փնտռեմ թէ այս գողութեան մէջ ի՞նչ բան ինծի հաճոյ էր, եւ ահա հոն գեղեցկութեան շուք միսկ չեմ տեսներ: Չեմ խօսիր այն գեղեցկութեան վերայ որ կը գտնուի իրաւունքի, խոհեմութեան բարիին, մարդուն հոգիին, իր յիշողութեան, ըզգայարանքներուն և իր անեցուցիչ կեանքին մէջ: Ո՛չ ալ երկնային մարմիններու մեծաշուք ներդաշնակութեան վրայ եւ ո՛չ երկրին ու ծովուն վրայ որք արարածներով կը լեցունին ծնունդներու և մահերու շարունակական յաջորդումով մը,

ո՛չ իսկ այն սուտ գեղեցկութեան վրայ որ խաբուսիկ կիրքերու քօղն է:

Ինչու որ հպարտութիւնը բարձրացում կը կեղծէ և Դուն ո՛վ իմ Աստուածս, միայն Դուն բոլոր էակներէն բարձր ես: Փառասիրութիւնը ի՞նչ կը փնտռէ, եթէ ոչ պատիւ և փառք եւ միայն Դուն պէտք է պատուընդիս և փառասիրութիւն բոլոր դարերուն մէջ: Բռնապետութիւնը կ'ուզէ վախ ազդել եւ ո՛վ է Ան որմէ պէտք է վախնալ եթէ ոչ Դուն միայն ով Աստուած: Քու իշխանութիւնդ երբեք կը թողո՞ւ որ բան մը յափշտակուի հոս, հո՛ն բան մը վերցուի մէկու մը կողմանէ: Եւ անսուրբ գգուանքները սէր կ'ուզեն ըլլալ, բայց ի՞նչ այնքան փայփայիչ է որքան Քու սէրդ: Ի՛նչ բան այնքան բարեբաղդաւար սիրուն է որքան Քու ճշմարտութեանդ գերիշխան եւ շողշողուն գեղեցկութիւնը: Հետաքրքրութիւնը ինքզինքն իբր գիտութեան սէր կ'ուզէ արժեցնել, սակայն Դուն միայն ունիս տիեզերական եւ բարձրագոյն գիտութիւնը: Տգիտութիւնն և նոյնիսկ անմատութիւնը ինքզինքնին ծածկած չե՞ն պարզութեան եւ անմեղութեան անուններուն տակ, քանզի ոչինչ կրնայ այնքան պարզ ըլլալ որքան Դուն ու Քու գործերդ չարին թշնամի ըլլալով՝ ոչինչ կայ Քեզմէ անմեղ: Ծուլութիւնը ինքզինքն իբր հանգստեան անհրաժեշտութիւն մը ցոյց կուտայ, Տէրոջմէ դուրս ո՞ր հանգիստը ապահովեալ է: Պերճանքը մեծութեան տեղ կ'ուզէ բռնել, բայց Դուն անապականի վայելքներու կենդանի եւ անապառ աղբիւրն ես: Յորդառատութիւնը առատաձեռնութեան գիծերով կ'ուզէ ներկութիւն, բայց Դուն ես բոլոր պարզներու փաթեմ մատակարարը: Ազահութիւնը կ'ուզէ շատ ունենալ, եւ Դուն բոլորը ունիս: Նախանձը նախապատուութեան համար կը վիճի, եւ ո՛վ Քեզմէ գերակայ է: Բարկութիւնը վրէժ կը փնտռէ, եւ ո՛վ Քեզմէ վրիժառու է: Վախը կը դողայ յանկարծակի հանդիպումներէն որք կ'սպառնան իր սիրածներուն եւ կը հսկէ անոնց ապահովութեան վրայ, բայց Քեզի համար բան մը տարօրինակ, յանկարծակա՞ն է: Ո՛վ կրնայ Քեզ բաժնել Քու սիրածներէդ: Քեզմէ դուրս ո՞ւր է մնայուն ապահովութիւնը: Տխրութիւնը կ'սպառն խանդավառ վայելքներու կորուստովը որովհետեւ պիտի ուզէր որ Քեզի նման իրեն ալ անկարելի ըլլար բան մը կորսնցնել: Այսպէս հոգին շնացող կ'ըլլայ երբ Քեզմէ դառնալով, Քեզմէ դուրս կը փնտռէ իր յագուրդը եւ զոր չկրնար գտնել մաքուր եւ անխառն, առանց Քեզի վերադառնալու:

Այս բաները Քեզի շեղակի կը նմանին, կը

հեռանան եւ կը բարձրանան Քեզի դէմ: Այսուհանդերձ, այսպէս Քեզի նմանիլ ջանալով ցոյց կուտան որ Դուն տիեզերքի Արարիչն ես եւ թէ չես թողուր տեղ մը ուր կարելի ըլլայ բոլորովին քաշուիլ Քեզմէ: Եւ ես ուրեմն ի՛նչ սիրեցի այս գոգութեան մէջ: Ինչո՞վ իմ Աստուծոյս նմանած եղայ, կե՛ղծ եւ ոճրապարտ հետեւորդ: Հաճո՞ք գտայ օրէնքը կոտրելով խորամանկութեամբ որ տկարներուն ուժն է: Փախստական գերի, որ կը քաշկռտէ անառակութեան շղթան, արդարութիւնը անպատիժ կերպով բռնաբարելուս, ամենակարողութեան մէկ ստուերոտ պատկերը գտայ: Դժբա՛ղդ գերի, որ կը փախչի իր Տէրոջմէն եւ շուք մը միայն կը գտնէ: Ո՛վ ապականութիւն: Ո՛վ կեանքի հրէշ: Ո՛վ մահուան անդունդ: Ի՛նչ որ ապօրինի էր կրցա՞ւ ինծի հաճոյ ըլլալ, միայն տնոր համար որ ապօրինի էր:

ԳԼՈՒԽ 7


Գ Ո Ն Ա Բ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Ի՛նչ հասուցանեմ Տէրոջը որ իմ հոգիս կ'ազատէ իմ յիշատակներու խոռովէն: Թող սիրեմ Քեզ ո՛վ Տէր, թող փա՛ռք տամ Քեզի եւ զաւանիմ Քու անունդ, Դուն որ ներեցիր ինծի այնքան ոճրապարտ եւ դարձելի գործեր: Քու շնորհքիդ, Քու ողորմութեանդ փառք կը բերեմ մեղքերուս սառոյցը հալեցնելուդ համար, նաեւ Քու շնորհքիդ փառք կը բերեմ իմ բոլոր չորր՝ Քու շնորհքիդ փառք կը բերեմ իմ բոլոր չորր՝ Դ՛հ, ես ի՛նչ բաներու կարող չէի քանի որ առանց շահու ոճիրը սիրած էի: Եւ կը վկայեմ որ բոլորը ներուած է ինծի, թէ՛ իմ կամաւ գործած չարիքս, թէ՛ ինչ որ ինծի գործելու խնայեց Քու ողորմութիւնդ:

Ո՞ր մահկանացուն իր տկարութիւններուն վրայ խորհելով պիտի համարձակէր իր անձնական ուժերուն վերագրել իր պարկեշտութիւնն ու անմեղութիւնը եւ պիտի կարծէր թէ Քեզ պակաս սիրելու է իբր թէ նուազ պէտք ունեցած ըլլար այն ողորմած ներումին որ Դուն կը շնորհես զղջացող մեղաւորներուն: Այն որ հնազանդելով Քու ձայնիդ՝ խուսափեցաւ այս բոլոր անկարգութիւններէն, որոնց յիշատակը եւ խոստովանութիւնը կը հրատարակեմ, այն մարդը թող զգուշանայ խնդալէ եթէ զիս կը տեսնէ բժշկուած այն Բժիշկէն որուն ինք կը պարտի իր հի-

ՇՆՈՐՀԱՅ ԾՈՎԷՆ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆՍ



Որդին մարդոյ եկաւ որպէսզի կորսուածը փնտռէ
ու փրկէ: Ղուկ. ԺԺ. 10

Ծնած եմ Պարտիզակի մէջ 1902ին: Հայրս պատուելի ըլլալուն համար շատ տեղեր պտըտած ենք, եւ վերջապէս հաստատուած Ատափագարի մէջ դեռ պզտիկ եղած ատենս: Ծնողքս ինծի Սուրբ Գրքէն պատմութիւններ, ինչպէս նաեւ համարներ զոց կը սորվեցնէին: Տակաւին ապաշխարութեան վրայ չէի խորհեր, միայն թէ Աստուծոյ կը վախճայի եւ սուտ չէի խօսեր:

1919ի վերջերս պատերազմի վախերէն Ատափագարէն ստքով քալելով ուրիշներու հետ Իգմիս գացինք: Հոն եղբայրս գտնելով միասին Պօլիս գացինք. ծնողքս Ատափագար կը մնային: Պօլսոյ մէջ մօրաքոյրս սրճարան մը ունէր, որ փրանսացի զինուորներուն խմելիք կը ծախուէր: Հոն սկսայ գործել, քանի որ ստիպուած էի մօրաքրոջս քով մնալ: Բայց աւագ, իմ զիտցած մաքուր կրօնքս հոն գոյութիւն չունէր: Հոն ջութակ նուագելով զինուորները կը զուարճացնէի: Ուտելիք եւ դրամ առատ կը վազէր հոն, որով մօրաքոյրս զիս շատ կը սիրէր, նաեւ իմ ներկայութենէս շատ կ'օգտուէր, քանի որ նուագին շնորհիւ միշտ զինուորները իրենց բարեկամութիւններուն հետ կուգային պարելու: Զգուեցայ ամէն տեսակ գէշութիւններով լեցուն այդ խանութէն եւ շատ փափաքեցայ հեռանալ այդ անիծեալ վայրէն, քանզի խիղճս զիս կը տանջէր: Ուստի աւելի լաւ սեպեցի ձգել այս տեղը եւ երթալ աւելի ծանր գործերու մէջ նետուիլ եւ մտայ երկաթագործի մը խանութը: Աշխատանքը թէեւ շատ ծանր էր, բայց աւելի երջանիկ կ'զգայի ինքզինքս: Սակայն ցաւալին այն է որ ստիպուած էի իրիկունները դարձեալ մօրաքրոջս խա-

նութը երթալ նուագելու համար. անոնց հետ կը բնակէի, քանզի չէի կրնար բոլորովին հեռանալ անոնցմէ. չէի ալ կրնար թողնալ ծնողացս հետ, քանի որ Անատոլիոյ ներքին խռովութեանց պատճառաւ թողնալ թիւնները դադրած էին: Այսպէս յուսահատ կեանքի մը ենթարկուած էի քանի որ տակաւին երջանիկ յոյսը չունէի: Բայց այս կեանքս երկար չտեւեց. ծնողքս յաջողեցաւ Պօլիս գալ եւ զիրար տեսանք: Մայրս այդ խանութը եկաւ եւ ականատես եղաւ այդ միջավայրին թշուառութեան: Իր առաջին գործը եղաւ զիս անկէ բոլորովին ազատել, եւ ապա Տէրոջը օգնութեամբ այդ անիծեալ տեղը գոցել տալ: Բաւական ժամանակ վերջ ծնողքս իրենց սիրած ու պաշտած Յիսուսի քով առնուեցան, որով ես մընացի միշտ: 1922ին Ֆրանսա մտալ Ամերիկա երթալու համար: Մարսիլիոյ մէջ տեսայ այն բոլոր աշխարհային մոլութիւնները որոնցմով Սատանան կապեր էր մարդիկ եւ կուրցուցած անոնց աչքերը: Հոն ես շատ կը յուզուէի տեսնելով շատ մը հայեր ալ որ գէշ ընթացքներու կը հետեւէին: Սիրտս շատ կ'ախրէր տեսնելով Սատանային գործած աւերները. միակ իմ մըխիթարութիւնս եղած է պատանի մը, որուն Ս. Գրքէն կը կարգայի եւ չէի թող տար որ կիրակի օրերը աշխատի: Մարսիլիոյ մէջ իմ բարոյական անարատ պահեցի, բայց երբ Փարիզ հասայ 1923 Մայիսին, սկսայ տկարանալ: Քայլ առ քայլ ետ գացի աւագ: Այս օրի իշխանը իմ աչքերս կուրցուց. սկսայ կիրակի օրեր սինեմա երթալ, յետոյ պարի դաս կ'առնէի եւ պարահանդէս կ'երթայի. ալ աշխարհի դարձած էի, իմ կարծիքս ալ շատերուն պէս փոխուած էր, ալ չէի հաւատար հոգեւոր կեանքի, ես ալ անոնցմէ էի որ միայն դրամի վրայ կը խորհին եւ կիրակին զուարճանալով կ'անցնէին: Ալ իմ մօրս անուշ խրատները մոռցած էի, կրօնքը այլեւս գոյութիւն չունէր ինծի համար: Անգամ մը մէկը ինծի Փարիզի մէջ նոր բացուած Հայ աւետ. եկեղեցիին հասցէն տուաւ, բայց չուզեցի երթալ, թէեւ խիղճս կը զրզէր որ երթայի, բայց շուրջիներէս կ'ամչնայի սինեման կամ պարահանդէսը ձգել եւ եկեղեցի երթալ, կը խորհէի թէ վրաս պիտի խնդան: Աւագ, մարդոց փառքը աւելի կը նախընտրէի:

Երբ ամուսնութեան համար ծնողեան վկայական մը պէտք եղաւ, այն ատեն ստիպուեցայ Աւետ. եկեղեցիին դիմել. թէեւ կրնայի առանց հոն երեւնալու ուղղակի ուրիշ տեղէ ճարել այդ թուղթը, բայց հիմա կ'զգամ որ Տէրը զիս հոն

ւանդացած չըլլալը կամ աւելի ճիշդը նուագ հիւանդացած ըլլալը: Թող Քեզ նոյնքան սիրէ, թող Քեզ աւելի սիրէ ընդունելով որ Ան որ զիս կ'աղատէ, նոյնն է որ զինքը ետ պահեց մեղքին մահացու թերութիւններէն:

Ազատ. Թարգ.

2. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ

Փարիզ

առաջնորդեց, մղեց զիս երթալ Աւետ. եկեղեցիին հովիւին: Հոն իմ արցունքներս աչքերէս վար թափեցան, եւ զգացի թէ ինծի համար մեռնող Փրկչիս դէմ ի՛նչ գէշ դիրք բռնած էի. հոն ծունկի գալով Փրկիչ Աստուծոյ գորութիւն խնդրեցի, բայց երբ դարձեալ իմ բնակած միջավայրս հասայ, միտքս դարձեալ պղտորեցաւ եւ չկրցայ հաստատ կենալ. յիրաւի մարդոց փառքը եւ աշխարհային զուարճութիւնները աւելի գորաւոր եղան, եւ այն կայծը որ սրտիս մէջ վառուած էր, դարձեալ մարեցի եւ աշխարհի տիղմին մէջ ընկղմեցայ: Այլ անկէ վերջ Սատանան աւելի ուժով եկաւ ու սրտիս մէջ տեղաւորուեցաւ: Այլ խաղաղութիւնս ինծմէ բոլորովին անհետացած էր: Անկէ վերջ Սատանան ինծի ուրիշ դուռ մը բացաւ, որ զիս հրապուրեց, այն է պարահանդէսներու մէջ նուագել: Լաւ վճարում եւ ճանապարհածախսը հայթայթուած, ուսելու խմելու եւ ամէն կողմէ պատիւի արժանանալ: Այս բոլոր զուարճութիւններուն մէջ ընկղմելով ինքզինքս բոլորովին աշխարհի հետ կապեցի, բայց այս բոլորին մէջ խաղաղութիւն չունէի:

Հետեւեալ դէպքը իմ կեանքս բոլորովին փոխեց: Անոր հայրս, բոլորովին առողջ մարդ մը, 1932 Յունուար 6ին կէս գիշերէն վերջ մեռաւ: Ուսէ մէկուն մտքէն չէր անցներ այս յանկարծական մահը. այդ գիշերուան մէջ բոլորս ալ արթնցանք եւ ահա անշունչ դիակ մը մեր առջև կար: Այդ վարկեանին ես ցնցուեցայ եւ սկսայ սոսկումով խորհիլ թէ ո՛րը զնաց անոր հոգին, թէ արդեօք պատրաստ էր: Երբ ֆրանսացի պատուելի մը եկաւ թաղման արարողութիւնը կատարելու, Սուրբ Գրքէն քանի մը համարներ կարդաց, որոնցմէ մէկ քանի տողեր իմ սրտիս խորքը թափանցեցին Ղուկ. ԺԲ. 35-40: Այն ժամէն իմ բոլոր մարմինս զոդաց եւ կատարեալ զղջումս այն ատեն սկսաւ: Անկէ վերջ սկսայ եկեղեցի յաճախել եւ իմ սիրտս խաչեալ Յիսուսին տուի: Փառք Իւր անուան որ զիս ընդունեց եւ Իրեն ժառանգակից ըրաւ: Անկէ վերջ նոր մտածածներու մէջ էի, զիս նոր մարդ մը ըրաւ, ալ երջանիկ եղայ, իմ բոլոր խղճի խալթէս ազատեցայ եւ փոխանակ այն անիծեալ պարահանդէսներուն մէջ նուագուած երգերէն երգելու, սկսայ հոգեւոր երգեր երգել եւ փառաբանել Տէրը ու Փրկիչը որ զիս փնտռեց ու գտաւ, զիս Իր փարախը բերաւ: Անկէ վերջ կնոջս խօսեցայ որ այսուհետեւ նոր կեանքի մը մէջ մտած եմ եւ երբ մեր սուգի օրերը լմնան, ալ չպիտի շարունակենք պարահանդէսի մէջ նուագել, կամ կի-

րակի օրեր աշխարհային կերպով ապրիլ: Բայց կինս երբեք չհանդուրժեց այս առաջարկիս եւ սկսաւ զիս սաստիկ նեղել, բայց անգամ մը Յիսուս իմ էութիւնս փոխած էր: Ըսի անոր որ Տէր Յիսուսի տուած եմ իմ սիրտս, ալ չեմ կըրնար ետ առնել: Բարեկամներս ալ զիս խենթի տեղ դրին եւ կը ջանային զիս ետ կեցնել այս նոր սկսած կեանքէս: Քիչ յետոյ հալածանքը աւելի սաստկացաւ. քանի որ ոչ պարահանդէս երթալու միտք ունէի եւ ոչ ալ ուրիշ զուարճութեան տեղեր, հապա կիրակի օրեր կամ եկեղեցի կ'երթայի կամ թէ տունս մէջ կը նստէի, նաեւ գործիս մէջ երեք անգամներ վնասուելու սպառնալիքը ստացայ, քանի որ այլեւս կիրակի օրեր չէի ուզեր աշխատիլ, բայց հազար փառք կուտամ Տէրոջս որ զիս սակաւին գործէս չհանցին: Նախընտրեցի Աստուծոյ փարիլ Անոր խօսքին համեմատ որ կ'ըսէ, «Լաւ է Տէրոջը յուսալ քան թէ մարդոց ապաւինիլ» Սաղ. ԾԺԸ. 8: Այո, Տէրը զիս շատ վտանգներէ ազատեց եւ տակաւին կ'ազատէ: Փառք Իր անուանը: Սիկարի գէշ ունակութիւնս ալ ձգեցի, ու թէ և ծանօթներէս ոմանք ջանացին որ դարձեալ ծխեմ, բայց ես Աստուծոյ առջև որոշում տուի որ անգամ մըն ալ չծխեմ. Փառք Իւր անուան որ զիս յաջողեց եւ զիս անբիծ ու անարատ պահեց, «Եւ Անոր որ կարող է ձեզ անբիծ ու անարատ պահել» Յուդ. 24:

Անգամ մը ծանօթ բարեկամի մը տունը սուգ կը թիրէր: Հոն Տէրոջը օգնութեամբ մէկ քանի հոգեւոր խօսքեր խօսեցայ. հոն եղողներէն մէկ կին մը խօսածներս կը պատմէ մեր տունը, որուն վրայ ընտանիքս զիս շատ յանդիմանեց եւ պատուիրեց որ անգամ մըն ալ Յիսուսի անունը ուրիշներու չխօսիմ, Դործ. Գ. 18: Հազար փառք Տէրոջս որ զիս արժանի կ'ընէ Իւր սուրբ անուան համար նախատուելու: 1934 Դեկտեմբերին կինս զիս դուրս ըրաւ, այնպէս խորհելով թէ խելքս գլուխս կը ժողվեմ եւ տուն դառնալով առջի պէս աշխարհային կեանքս կ'սկսիմ: Բայց օրհնեալ ըլլալ իմ Տէրս ու Փրկիչս որ զիս մինակ չթողուց, քանզի իմ բոլոր միակուլութեանս մէջ ինծի օգնական եղաւ, եւ զիս ազատեց իմ բոլոր փորձութիւններէս: Ամիսի մը չափ պանդոկի մը մէջ կենալէ վերջ կինս ինծի եկաւ եւ ամէն պայմաններս ընդունեց, բացի մէկ պայմանէ, որ ունէ մէկուն Յիսուսի վրայով չխօսիմ, նաեւ ունէ մէկուն թերթիկներ չբաժնեմ, բայց ես աւելի լաւ սեպեցի Գրիստոսը ամէն տեղ դաւանիլ, եւ մինակ ու խեղճ ապրիլ քան թէ ընդունիլ որ վկայութիւնս խափանուի: Շարաթ

մը վերջ դարձեալ եկաւ եւ այն պայմանն ալ ընդունելով խոստացաւ իմ կրօնքիս վերաբերեալ բոլոր գործերուն չխառնուիլ, ասոր վրայ տուն վերադարձայ 18 Յունուար 1935ին:

Ասկէ վերջ հալածանքը քիչ մը դադրեցաւ, բայց Սատանան արթուն կը հսկէ եւ չորս կողմս կը դառնայ մօնչող առիւծի պէս, բայց հազար փառք Տէր Յիսուս Բրիստոսի, իմ Փրկչիս, որ զիս ամէն նեղութենէ կ'ազատէ: Ալ անհուն ուրախութիւն մը ունիմ սրտիս մէջ, աշխարհ չի կրնար իմ ունեցած ուրախութենէս աւելին տալ: Տէրը զիս յաւիտենական կեանքի երջանիկ յուսով պատած է, ալ ուրախ կ'երգեմ, փառք Իր սուրբ անուան:

Իր անհուն սիրով ինծի պէս կորուսուած փնտռեց, ներեց իմ բոլոր մեղքերս, ա'լ իմ անիրաւութիւններս չյիշեց եւ ինծի ժամանակ տուաւ ապաշխարելու:

Հիմա սոսկումով կը նայիմ ասկէ առաջուան կեանքիս վրայ եւ կ'ամչնամ երբ կը խորհիմ թէ ինչպէս պիտի կենայի Աստուծոյ եւ Իր հրեշտակներուն առջեւ երբ Տէրը իմ հաշիւս պահանջէր: Աստուծոյ սիրոյն դէմ մեղանշած էի եւ արժանի էի յաւիտենական տանջանքի, բայց Իր փրկարար շնորհքովը դուռս զիս:

Հիմա իմ սրտիս ամենամեծ ցաւը իմ շուրջիներուն աշխարհային կեանքն է. սիրտս կը խոցուի երբ կը լսեմ անոնց խօսքերը: Իմ տանս մէջ գտնուող անտարբեր հոգիներուն համար ցաւ կը քաշեմ, եւ կը պաղատիմ Աստուծոյ որ ինչպէս որ զիս փրկեց զանոնք ալ փրկէ եւ ազատէ յաւիտենական կորուստէ:

Շատ անգամ կ'արգիւրիմ Տէրոջը տունը երթալէ, բայց Աստուծապաշտութեան եռանդը իմ մէջ ալ աւելի կը զօրանայ: Փառք Յիսուսի ասոր համար: Ա'լ Անոր քաղցր սէրը կը վայելեմ եւ կ'ուզեմ ի սպառ մնալ Անոր շնորհքին եւ սիրոյն մէջ:

ՎԱՀԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Փարիզ

Հոգւոյն Սրբոյ ձեր վրայ եկած ատենը գոբութիւն պիտի առնէք, ու ինծի համար վկաներ պիտի ըլլաք երուսաղէմի մէջ եւ բոլոր Հրէաստանի ու Սամարիայի մէջ ու մինչեւ երկրի ծայրերը:

Գործ. Ա. 8

ԿԵՆԱՅ ԱԾՈՒՆԵՐԷՆ

ՄԻՆՁԵՒ ԶԱՆԻԿԱ ԳՏՆԷ

(Իրական կեանքէ)

Ես եւ իմ ընկերս Ս... միեւնոյն դրամատան պաշտօնեայ էինք: Ամէն օր իրարու հետ էինք, երբ ես անոր կը խօսէի իմ ապաշխարութեանս վրայ ու կը վկայէի թէ Տէրը մեծ հրաշքներ գործած էր իմ վրայ, նա այս բոլորը ծաղրանքով կ'ընդունէր: Իմ բոլոր ջանքերս զոր կ'ընէի իմ ընկերոջս զայն հաւատքի բերելու համար, ապարդիւն կ'անցնէին. զի նա Տէրը նախատելով դէմ կը դնէր իմ խրատներուն:

Օր մը, առաջին անգամ ըլլալով իրարմէ բաժնուեցանք. ես ուրիշ քաղաք մը դացի, նոյն դրամատան մէկ մասնաճիւղին մէջ պաշտօնավարելու համար: Հազիւ թէ տարի մը անցած էր, երբ առտու մը ցրուիչը իմ հասցէիս ուղղուած նամակ մը յանձնեց ինծի: Այսպէս գրուած էր մէջը. «Իմ դժբաղդ սիրելի որդիս մահամերձ վիճակի մէջ է, ձեր շուտափոյթ գալստեանը կ'ըսպասեմ»:

Ընկերոջս մայրն էր որ զիս կ'ուզէր, իրենց հասցէն ալ մէջը գրած, կը խնդրէր որ շուտով մեկնիմ, եւ կ'աւելցնէր, «Տէրը օրհնէ քու այցելութիւնդ»:

Այդ օրուան աշխատութիւնս երբ լրացուցի, անմիջապէս բարեկամի մը տունը գացի, որ դրամատան մօտերը կը բնակէր: Նամակը զրպանէս հանելով ցոյց տուի իրեն, եւ վստահ իր հաւանութեանը իմ առաջարկիս, ըսի անոր, «դուն ալ աղօթէ հոս, մինչեւ որ ես հոնկէ վերադառնամ»:

Երբ ներկայացայ տրուած հասցէին, տարիքոտ կին մը ընդունեց զիս ու իր Զերմազին շնորհակալութիւնը յայտնելով ըսաւ, «Դժբաղդ զաւակըս դիմացի սանդուխին վրայի առաջին սենեակին մէջն է»:

Ներս մտնելով մեծ սոսկում մը զգացի տեսնելով իմ ընկերոջս դէմքը — կենդանի պատկեր մը սարսափի: Իր երեսը կապտադոյն էր ու իր աչքերը կարծես խոռոչներէն դուրս կ'ելլէին: Նա կը գալարուէր իր անկողնին մէջ ու կը կրկնէր, «Մետասաներորդ ժամը անցաւ, ո'հ, Աստուած իմ, չկայ յոյս ինձ համար»:

Իմ ներս մտնելու չնշմարեց ու բարեւս ալ կ'երեւի չլսեց. ան միշտ կը կրկնէր անյոյս նոյն խօսքերը:

Նստելով իր անկողինն մօտ, ընկճուած սոսկալի տեսարանէն զոր կը պարզուէր իմ աչքերուս առջեւ, աղօթեցի լռութեամբ Անոր որ «կարող է փրկելու» ազատելու անդունդէն այս անմահ հոգին:

Բայցի Աստուածաշունչ Մատեանս եւ կարգաւ սկսայ Աւետ. ըստ Ղուկասու ԺԵ. գլուխը «Եւ բոլոր մաքսաւորները... մինչեւ զանիկա գտնէ»: (1-4 համար): Այս վերջին բառերը կրկնեցի շեշտով, «մինչեւ զանիկա գտնէ» եւ աւելցուցի, Ո՛հ, իմ սիրելի Ս... չե՞ս տեսներ, չե՞ս հասկնար, զրուած է, «Մինչեւ զանիկա գտնէ»: Ան զեռ քեզ գտած չէ, ինչ որ կ'ապացուցանէ թէ Ան զեռ քեզ կը փնտռէ:

Ընկերս քիչ մը հանդարտիլ սկսաւ, ես ալ նոսրիթէն օգտուելով ամբողջութեամբ կարգացի նոյն գլուխը որ մեզի կը խօսի սիրոյ մը մասին որ մեղաւոր հոգիներ փրկելու ետեւէ է, եւ անոր շեղած, կորսուած եւ հոգեւորապէս մեռած է, աստուածային սիրող սրտին ամենաթանկագին առարկան ընելու:

Եւ հոն, հիւանդին սենեակին լռութեան մէջ կրցայ տեսնել Փրկչին սիրոյ հրաշքը, նոր ծընունդը հոգիի մը որ կը հաւատայ:

Մահամերձը գտնուած էր Բարի Հովիւէն, նա ընդունուած էր իբրեւ սիրելի զաւակ մը Հօրմէն եւ այն վստահութեամբ՝ զոր կուտայ մեզ Սուրբ Հոգին, անիկա ստացած էր փրկութեան ուրախութիւնը: Իր սարսափները եւ անձկութիւնը անհետացած էին: Ան կրնար խաղաղութեամբ ներս մտնել երկինքի դռնէն:

Սիրելի ընթերցող, քու հոգիդ ալ փրկուած է: Եթէ այս հարցման պատասխանդ ժխտական է, գիտցիր թէ Ան կը փնտռէ զքեզ ու կը սպասէ քեզի:

Թարգ. Մ. Կ. ՊԱՐՍԱՄԵԱՆ

ԱՆՁՆՈՒԷՐԸ

○○○○○○○

Բայց վայս գիտցիր որ վերջին օրերը չար Ժամանակներ պիտի գան, վստիկ մարդիկ պիտի ըլլան անձնատէր... Բ. Տիմ. Գ. 1

Հին օրերու կարծիքն այս էր մեր հայրերուն, թէ՛ աշխարհը կեդրոնածիք եւ աննըկուն Առանցքն է կուռ, հրաթաւալ լոյս առաջերուն, Եւ արեւն իսկ կը դառնայ շուրջը մեր երկրին:

Բայց հոգեւոր աղջամուղջը այս օրերուն՝ Անկըշնորէն աւելի է, զո՛րչ եւ անհո՛ւն... Զի ամէն մարդ կը կարծէ թէ աշխարհն համբուն, Նոյնիսկ Աստուած պէտքէ դառնայ շուրջն իր ետին:

Թէ՛ ամէն տեղ եւ անպայման եւ օրն ի բուն, Ամէն էակ պէտք է պաշտէ եսն իր թաքուն, Ծունըր դրած ստորկօրէն ոտքն իր գահուն:

Տէ՛ր, ե՛րբ պիտի մեր ետերը դառնան նըկուն, Եւ Քու Սէրըդ հիւսիւսայգի պէս փողփողուն՝ Այգեգօծէ հորիզոնը մեր սրտերուն...

Լսա Սիօթա

ՍԱՄՈՒԷԼ Պ.

Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԱՆԴՐԷԱՍ ԱՌԱՔԵԱԼ

○○○○○

Սիմոն Պետրոսի եղբայրն էր՝ Գալիլեայի Բեթսայիղայէն: Մին էր Աստուծոյ թագաւորութեան եռանդուն սպասողներէն: Ուստի երբ լսեց Յովհաննէս Մկրտիչի քարոզութիւնը, ինքն ալ ապաշխարեց, մկրտուեցաւ անկէ եւ դարձաւ անոր աշակերտը՝ յուսալով որ շուտով պիտի յայտնուէր նաեւ Մեսիան: Եւ ահա օր մը Յիսուսի ակնարկելով՝ ըսաւ իր վարդապետը, «Ահա Աստուծոյ Գառը Որ աշխարհի մեղքը կը վերցնէ: Ասիկա է Որու համար ես կը զրուցէի, իմ ետեւէ՞ մարդ մը կուգայ որ ինձմէ առաջ եղաւ... ես գնահիկա չէի ճանշնար, բայց Ան Որ գիտ զրկեց ըրով մկրտելու, Ինք ըսաւ ինձի, Որու վրայ տեսնես Հոգին, Որ կ'իջնէ ու կը հանգչի Անոր վրայ, Ասիկա է Որ Սուրբ Հոգիով կը մկրտէ: Ես ալ տեսայ ու վկայեցի թէ Ասիկա է Աստուծոյ Որդին»:

Կրնանք երեւակայիլ թէ Մկրտչին այս վկայութիւնը Յիսուսի նկատմամբ՝ անհուն ցնձութեամբ լեցուց Անդրէասի սիրտը եւ վստիկ խոր հուրդներու եւ որոշումներու մղեց անոր միտքն ու կամքը: Անիկա հազիւ կրցաւ սպասիլ օր մըն ալ: Հետեւեալ օրը հազիւ կրկնած էր իր վարդապետը. — «Ահա Աստուծոյ Գառը», Անդրէաս միացաւ իր բարեկամ Յովհաննէս Զեբեդեանի հետ եւ հետեւեցաւ Յիսուսի՝ մինչեւ Անոր օթեալը: Յիսուսի անձին ու բնականաբար արտաքին անշարժութիւնը չխրտչեցուց, յուսախաբուութեան չենթարկեց Անդրէասը, հապա նա այնքան զբաւուե-

ցաւ Անոր ներքին փայլէն որ ալ տարակոյն չունէր թէ ճշմարիտ էր իր նախկին վարդապետին վկայութիւնը, «Ասիկա է Աստուծոյ Որդին»:

Իր այդ փորձառութիւնը եւ անկէ բխած ուրախութիւնը Անդրէասը իսկոյն դործի մղեցին. նա գնաց, փնտռեց, գտաւ իր եղբայրը Սիմոն Պետրոս եւ ուրախութեամբ աղաղակեց անոր. — «Գտանք Մեսիան, Որ Քրիստոս (Օծեալ) կը թարգմանուի ու տարաւ զանիկա Յիսուսի քով» (Յովհ. Ա. 29-42):

Եթէ Անդրէաս ուրիշ ուէ գործ ալ կատարած չըլլար, մեծ բան մըն էր անոր վերոյիշեալ գործը. նա Յիսուսի առաջնորդեց աշակերտ մը, զոր մեր Տէրն իսկ եկեղեցւոյն վէմը (Պետրոս) կոչած է: Այսօր ալ քանի՜ քանի՜ խոնարհ, տկար քրիստոնեաներ կրնան Աստուծոյ թաղաւորութեան համար մեծ գործ մը կատարել, երբ իրենց խօսքով ու կեանքով միջոց ըլլան դարձին աշակերտ մարդոց, որոնք կարող պիտի ըլլան սիւններ դառնալ Քրիստոսի եկեղեցւոյն մէջ:

Սակայն Անդրէասի գործը միայն այսքանով չվերջանար: Պատահական բան մը՝ չէ որ անոր անունը առաքելոց ցանկին մէջ չորրորդ տեղը կը գրաւէ, — Պետրոսէն, Յակոբոսէն ու Յովհաննէսէն անմիջապէս ետքը կուգայ (Մարկ. Գ. 13-19): Գործ. Ա. 12, 13): Երբ Աւետարաններն ու Գործք Առաքելոցը գրուեցան, առաքեալներէն ոմանք արդէն մարտիրոսացած էին եւ ուրիշներ ալ շատ մօտ իրենց եղբայր կեանքի վախճանին: Ուստի յայտնի էր անոնց գործունէութիւնը: Ասոր նայելով շարուած են անոնց անունները ցանկին մէջ: Ասկէ զատ՝ ուրիշ երկու պատճառներ ալ կը ցուցնեն թէ Անդրէասը մին էր Յիսուսի ամենէն մօտ աշակերտներէն: Նախ ինքն ալ հետն էր Յիսուսի ամենէն մտերիմ երեք աշակերտներուն, երբ անոնք՝ Երուսաղէմի կործանման ու երկրորդ գալստեան ակնարկելով առանձին հարցուցին մեր Տէրով, «Ըսէ մեզի, ե՞րբ պիտի ըլլան այդ բաները եւ ի՞նչ նշան պիտի ըլլայ այդ ամէն բաներուն կատարուելուն առեւնը» (Մարկ. ԺԳ. 1-4): Երկրորդ՝ Փիլիպպոս յոյները ներկայացնելու համար Անդրէասի գործակցութեան կը դիմէ:

Անոնցմէ կրնանք եզրակացնել թէ Անդրէաս ալ Սուրբ Հոգւոյն զօրութեամբ լեցուելէն ետք, իր եղբորը նման մարդոց ընտիր որսորդ մը դարձաւ (Մատթ. Գ. 18-20) եւ շատ մը անմաս հոգիներ իր ուղկանը ձգելով իր մեծ Փրկչին տարաւ:

Կրնանք այսպէս խորհիլ հակառակ անոր որ Գործք Առաքելոց մէջ միայն մէկ անգամ անոր

անունը յիշուած է, բայց անոր գործին մասին բնաւ բան մը յիշուած չէ: Նոյն դիրքը բռնած է Ղուկաս զրեթէ բոլոր առաքեալներուն հանդէպ: Անոր այս ընթացքը լուսաբանելու համար թարգմանաբար մէջ բերենք A. Schlatter մեծ մեկնիչը կը գրէ Գործ. Ա. 13ի մասին. — Իր կարողութենէն ու ծրագիրէն զուրս էր առանձին առանձին տեղեկագրել անոնց իւրաքանչիւրին կեանքին ու գործին նկատմամբ: Նոյնիսկ Պետրոսի գործին երկրորդ մասին վրայով աեղեկութիւն մը չունինք: Բայց ասով Ղուկաս երբեք ըսել չուզեր թէ առաքեալներու միութիւնը անկարելորդ է: Ընդհակառակը անիկա հոս անոնց անուանացանկը տալով և ապա անոր յաջորդող պատմութիւնը գրելով՝ մեզի մասնաւորապէս կը յիշեցնէ թէ անոնք (առաքեալները) եղած են եկեղեցին կրողներն ու անոնց առաջնորդները: Եթէ մենք անոնց գործին մասին հարցնենք, Ղուկաս եկեղեցին կը ցուցնէ: 12 առաքեալներուն աշխատանքին միջոցաւ էր որ կազմուեցաւ Յիսուսի եկեղեցին, որ զԱյն կը ճանչնար եւ Որու մէջ կենդանի մկաց Անոր պատկերը, պահուեցաւ ու զործադրուեցաւ Անոր խօսքը, անմոռանալի դարձաւ Անոր խաչը եւ հաւատացուեցաւ Անոր յարութիւնը: Առաքելական խմբակցութեան մէջ հաշիւ ըրած չեն — ոչ ալ կարող էին ընել — թէ որչափ էր անոնցմէ իւրաքանչիւրին բաժինը վերոյիշեալ գործերուն մէջ: Քանզի անոնց զօրութիւնը հաստատուած էր այն միաբանութեանը վրայ, ուր անոնց խօսքը մէկմէկու կը համաձայնէր ու անոնց գործը կը կատարուէր մէկ սրտով:

Ահա գաղտնիքը Անդրէասի եւ ուրիշ շատ մը առաքեալներու գործին մասին անտեղեակ ըլլալուն, Ղուկասի նպատակն էր մեզի հաղորդել ի էինչպէս կազմուեցաւ Քրիստոսի եկեղեցին Իսրայէլի ու հեթանոս աշխարհի մէջ: Ուստի աւելի կը ծանրանայ թէ եւ զիսաւոր գործիչներու վերայ, բայց միեւնոյն ատեն այլեւայլ ակնարկութիւններով մեզի կը ցուցնէ թէ միւս առաքեալները եւ շատ մը ուրիշ քրիստոնեաներն ալ իրենց կարեւոր դերը ունեցած են եկեղեցւոյն կազմութեանը եւ յառաջդիմութեանը մէջ:

Ինչպէս Անդրէասի գործին նոյնպէս նաեւ մահուան պարագաներուն նկատմամբ ստոյգ տեղեկութիւն մը չունինք: Միայն թէ հին աւանդութիւն մը կը ցուցնէ թէ Աքայիայի, Կորնթոսի նահանգին մէջ մարտիրոսացած է նա խաչուելով իր Տէրով նման:

ՓԻԼԻՊՊՈՍ ԱՌԱՔԵԱԼ

— 00 —

Անդրէասի հայրենակից էր, Բեթսայիդա քաղաքէն: Իր կոչումը տեղի ունեցաւ Պետրոսէն միայն մէկ րոյսէն ուղղակի Յիսուսի հրաւերով: Փիլիպպոս ալ Անդրէասի նման իսկոյն ճանչցաւ թէ Յիսուսը խոստացեալ Մեսիան էր, «Ան, Որու համար Մովսէս օրէնքին մէջ գրեց ու մարգարէներն ալ (Յովհ. Ա. 43-46): Այս եւ ուրիշ պարագաներէ կրնանք հասկնալ թէ հաւատացեալ Արքանաժի ճշմարիտ գաւազներուն մէջ որքա՛ն մեծ էր սպասումը Քրիստոսի գալստեան եւ թէ ինչպէ՛ս անոնք յանձին Նազովրեցի Յիսուսին կը ճանչնային Մեսիան, հակառակ Անոր արտաքին անշքութեան. քանզի անոնք դեռ իրենց պարզունկ բարեպաշտութեան մէջ էին եւ խմորուած չէին փարիսեցւոց խմորով:

Յիսուսի աշակերտելէ յետոյ Փիլիպպոս իր առաջին գործն ըրաւ զանեւ իր բարեկամը Նաթանայէլը եւ անոր ալ հաղորդել ուրախութեան աւետիսը: Պարզ խօսքով մը, «Եկուր ու տես» կոտրեց անոր դիմադրութիւնը եւ զայն առաջնորդեց իր Վարդապետին:

Սակայն հակառակ այս լաւ սկզբնաւորութեան՝ Փիլիպպոս դեռ շատ լուրջ զայրոցէ մը անցնելու էր իր առաքելական կոչմանը յարմարելու համար: Նախ անոր կը պակսէր կենդանի հաւատքը Քրիստոսի զօրութեան վրայ: Այդ ի յայտ կուգայ հացի հրաշքի ատեն, երբ 5000է աւելի բազմութեան ակնարկելով՝ Յիսուս փորձեց զայն ու անոր հարցուց, «Ուրկէ՞ հաց ծախու առնենք որպէսզի ատոնք ուտեն»: Փիլիպպոս հաշուեց թէ որքան դրամ պէտք էր միայն համեստ ճաշի մը համար: Քանի որ Յիսուս այդ գումարը չունէր, իր զաղափարով անկարելի էր՝ այդ մեծ խումբը կերակրել, իր աչքերը յառած էին բնականին, տեսանելիին եւ ոչ թէ աստուածային անսահման կարելիութեանց Յովհ. Զ. 5-7:

Երկրորդ՝ Փիլիպպոս Յիսուսի մէջ զԱստուած գտած չէր նոյնիսկ Անոր մահէն դեռ մի քանի ժամ առաջ: Վերջին իրիկունն էր, մեր Տէրը իր խաչին ակնարկելով, ըսաւ աշակերտներուն թէ անոնք տեսած են ու կը ճանչնան Հայրը, իր սէրէն դատելով՝ ըմբռնած են թէ սէր է Աստուծոյ էութիւնն ալ եւ այդ սէրէն մղուած Հայր ու Որդի կը բերեն խաչին մեծ զոհը: Բայց Փիլիպպոս խնդիրքով մը, — «Տէ՛ր, Հայրը մեզի ցուցուր ու

հերիք է մեզի» — կը հասկնէ թէ Յիսուսի խոնարհութեան, սրբութեան եւ անձնագոհ սիրոյն մէջ չէր փնտռեր զԱստուած (Յովհ. ԺԴ. 8-10):

Սակայն եկաւ խաչելութիւնը, եկաւ յարութիւնը եւ վերջապէս նաեւ Սուրբ Հոգւոյն լեցունութիւնը եւ ահա ինչպէս միւս առաքելներուն, նոյնպէս նաեւ Փիլիպպոսի մէջ ամէն բաները նոր եղաւ եւ անիկա ալ ապրումն ունեցաւ թէ ով որ Յիսուսը տեսաւ «Հայրը տեսաւ»: Ալ անկէ ետեւ Յիսուսը եղաւ Փիլիպպոսի զործունէութեան ու կեանքին նպատակը: Բայց դժբաղդաբար իր զործին նկատմամբ ոեւէ որոշ բան մը չենք գիտեր: Միայն աւանդութենէ մը այսքան հասած է մեզի թէ նա Փոռզիոյ մէջ միսիոնարած է եւ Հերապոլիոյ մէջ մարտիրոսացած:

Գ. Գ. Խ

ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴԱՍԵՐՈՒ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

— 0000 —

ՄԱՅԻՍ 5.—

ՄԵՂՔ, ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ եւ ՀԱՒԱՏՔ Կարգա Եսայ. Ա. 10-20: Սաղմ. ԾԱ. 1-10: Ղուկ. ԺԵ. 11-24:

Հին Կտակարանին մէջ զանազան բառերով արտայայտուած մեղքի երեք տեսակներ կան՝ զորոնք ամփոփուած կը գտնենք Ելից ԼԴ. 7 եւ Սաղմ. ԼԲ. 5ի մէջ: Եթէ Աստուծոյ պատուիրանքները (եւ ոչ թէ միայն Մովսէսի օրէնքը) մեղ Աստուծոյ վերին կոչումին, նշանաբանին առաջնորդող ուղիղ ճամբայ մը կը նկատենք, ուրեմն

Մեղքը կարելի է նկատել պակսիլ (ճամբան կէս մնալ)՝ Հոով. Գ. 23:

Անօրէնութիւնը կարելի է նկատել զանցառութիւն Ա. Յովհ. Գ. 4, եւ՝

Յանցանքը կարելի է նկատել խոտորիլ նշանաբանէն Եսայ. ԾԳ. 6:

Ապաշխարութիւնը զղջման հետ միասին նաեւ կեանքի ուղղութիւն փոխել եւ հատուցում ընել է ուր որ անկ է (Ղուկ. ԺԹ. 8, 9):

Փրկող հաւատքին առարկան Քրիստոս է. փըրկող հաւատքը ունենալ Քրիստոսը ընդունիլ է (Գործ. ԺԶ. 31: Հոով Ե. 1):

Բազդատէ Եւայի փորձութիւնը, Քրիստոսի փորձութիւնը եւ Յովհաննէսի մեր փորձութեանց

մասին խօսածները (Ծննդ. Գ. 1-6: Մատ. Դ. 1-11: Ա. Յովհ. Բ. 16):

Աղամ ի՞նչ կերպով կրեց իր անօրէնութեան պատիժը (Ծննդ. Բ. 17: Գ. 19, 22-24: Ե. 5):

Որո՞նք են այն երկու ճամբաները որով բոլոր մարդիկ մեղաւորներ եղած են (Սաղ. ԾԱ. 5: ԺԴ. 2, 3: Հոով. Ե. 12):

Ի՞նչ է մեղքի վրայ Աստուծոյ դատաւճիռը (Ծննդ. Բ. 17: Եզեկ. ԺԸ. 4: Հոով. Ե. 12: Զ. 23):

Քրիստոնէաներ ե՞րբ ապաշխարութեան կը կարօտին (Բ. Կոր. Է. 9, 10: Յայտ. Բ. 5, 16, 21: Գ. 3, 19):

Ապաշխարութիւնը ի՞նչ միջոցներով երեւան կուգայ (Գործ. Բ. 37, 38, 41: Հոով. Բ. 4: Բ. Պետ. Գ. 9: Բ. Տիմ. Բ. 24, 25):

Ի՞նչ են փրկող հաւատքին արդիւնքները (Ա. Պետ. Ա. 5: Յովհ. Ա. 12: Հոով. Ե. 4: Գործ. ԻԶ. 18):

ՄԱՅԻՍ 12.—

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵԿԵՂԵՅԻՆ Կարգա Գործ Բ. 41-45: Եփես. Դ. 1-7: 11-16:

Որո՞ւ միջոցաւ եւ որո՞ւ վրայ եկեղեցին հիմնուեցաւ (Մատթ. ԺԶ. 18: Ա. Կոր. Գ. 11: Եփես. Բ. 20):

Եկեղեցիին համար ի՞նչ օրինակներ գործածուած են (Եփես. Բ. 21: Դ. 12, 15, 16: Ե. 25):

Ի՞նչ պէտք է ըլլայ եկեղեցիին զբաղմունքը (Ա. Թես. Դ. 1: Յովհ. ԺԵ. 27: Բ. Կոր. Զ. 1: Մարկ. ԺԳ. 34-37):

Քրիստոնէաներ իրարու վրայ ի՞նչ աչքով պարտին նայիլ (Հոով. ԺԲ. 4, 5: Ա. Կոր. ԺԲ. 12, 26, 27):

Ի՞նչ է Քրիստոսի յարաբերութիւնը առ եկեղեցին (Ա. Կոր. Գ. 11: Եփես. Ա. 22: Կող. Ա. 18: Եփես. Ե. 24, 25, 32):

Ի՞նչ բաներուն միաբանութեան կանչուած են քրիստոնէաները (Եփես. Դ. 3, 13):

Ի՞նչ անուն յաճախ տրուած է եկեղեցիին (Գործ. Ի. 28: Ա. Կոր. Ա. 2: Ժ. 32: ԺԱ. 22: ԺԵ. 9: Բ. Կոր. Ա. 1: Գաղ. Ա. 13: Ա. Տիմ. Գ. 5, 15):

ՄԱՅԻՍ 19.—

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ Կարգա Մատ. Գ. 13-17: Մարկ. ԺԶ. 15-18: Գործ. Բ. 38-41:

Մկրտութիւնը հրամայուած (Մատ. ԻԸ. 18-20): Եթէ ովպացի ներքինին մկրտութիւնը (Գործ. Ը. 26-39):

Յիսուսի մկրտութիւնը (Մատթ. Գ. 13-17): Երեք հազարին մկրտութիւնը (Գործ. Բ. 37-42):

Հեթանոսաց մկրտութիւնը (Գործ. Ժ. 44-48): Բանտապետին մկրտութիւնը (Գործ. ԺԶ. 25-34):

Մկրտութեան իմաստը (Հոով. Զ. 1-11):

Մայիս 26.—

ՏԷՒՈՋԸ ԸՆԹՐԻԻՔԸ Կարգա Մատթ. ԻԶ. 17-30: Ա. Կոր. ԺԱ. 23-29:

Քրիստոնէին Տէրոջը ընթրիքին մասնակցելը հնազանդութեան գործ մըն է (Ղուկ. ԻԲ. 19, 20: Ա. Կոր. ԺԱ. 24, 25):

Յիշատակութեան գործ մը (Ղուկ. ԻԲ. 19: Ա. Կոր. ԺԱ. 25):

Իր մահուան վկայութիւն մը (Ա. Կոր. ԺԱ. 26): Վկայելու թէ փրկութիւնը Յիսուսի արիւնով է (Մատթ. ԻԶ. 28):

Ընկերակցութեան (Ա. Կոր. Ժ. 16, 17):

Փառաբանութեան եւ գովաբանութեան (Ղուկ. ԻԲ. 19: Ա. Կոր. Ժ. 16: Մատթ. ԻԶ. 27, 28, 30):

Լոկէային եւ զօրութեամբ պատմել է Քրիստոսի երկրորդ գալուստը (Ա. Կոր. ԺԱ. 26):


Տէրը ամէն հաւատացեալի կ'ըսէ.—

«Փալաքելով փալաքեցայ որ այս զատիկը ձեզի հետ ուտեմ» (Ղուկ. ԻԲ. 15):

ԹԱՐԳՄ.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՃԱՆ ՈՒՒՍԼԻ



«Բանբեր»ի Մարտ թւոյն վախճանին տեսանք թէ ճան Ուէսլի, Չարլզ Ուէսլի եւ ճօրճ Հուայթֆիլս միացած պատրաստ էին արթնութեան կըրակը ամէն կողմ տարածելու: Միակ բանը որ անոնց կը պակսէր՝ քարոզութեան դաշտն էր: Պաշտօնական եկեղեցիները մէկը միւսին ետեւէն իրենց դռները կը գոցէին անոնց առջեւ: Երեք օրուայ ընթացքին 5 եկեղեցիներ իրենց դռները գոցեցին Հուայթֆիլսի առջեւ: 1739 տարուան ընթացքին Ուէսլիի առջեւ բաց մնացած էին միայն չորս եկեղեցիներ Լոնտոնի մէջ եւ չորս ալ գաւառները:

Այս մերժումներուն պատճառը այն էր որ Լիտասարդ քարոզիչները հաւատքով եղած փրկութիւնը կը քարոզէին: Չափազանց Աւետարաւ նսական երեւցած այս պատգամները նոր վարդա-

պետութիւններ կոչուեցան: Այսպէս է որ հոգեւոր թուլութեան յաջորդող շրջաններուն կ'ամբաստանուին անոնք որ կ'ուզեն հին հաւատքը վերարծարծել:

Իրերու այս վիճակին մէջ գործի միակ դաշտը որ կը մնար Ուէսլիի և իր ընկերներուն՝ բացօդեայ դաշտերն ու բլուրներն էին: Բայց հոգ անոնք, մանաւանդ ձան Ուէսլի, կը վարանէին: Վասնզի անոնք ծնած էին Անկլիքան պաշտօնական եկեղեցւոյ ծոցէն եւ խիստ նախանձաւոր էին եկեղեցական շէնքերու, եկեղեցւոյ աւանդութեանց ինչպէս նաեւ կրօնական արարողութեանց կարգ ու սարքին:

Այս կէտին մէջ խզումի առաջին քայլը առնողը Հուայթֆիլտ եղաւ: Իրականութեան մէջ կարելի է զայն ժԸ. դարու արթնութեան Յովհաննէս Մկրտիչը կոչել: Երբ նա տեսաւ թէ Պրիսթօլի մէջ իր առջև Աւետարանին համար ամէն զուտ զոցուած էր, եւ լսեց թէ մարդիկ իրեն համար կ'ըսէին, «Քանի որ այնքան փափաք ունի կուսակաշտները դարձի բերելու՝ թող երթայ Քինկզվուտի հանքագործները դարձի բերէ»:

1739 Փետր. 17ին (յիշատակելի օր մը ժԸ. դարու արթնութեան համար) նա ճամբայ ելաւ դէպի Քինկզվուտ, եւ հոն բլրակի մը վրայ իր առաջին բացօդեայ քարոզութիւնը ըրաւ մօտ 200 հանքագործներուն: Այս թիւը օրէ օր բազմապատկուելով հասաւ մինչեւ 20 000ի: Ոչինչ աւելի յուզիչ էր քան հանքագործներու այս հսկայ բազմութիւնները, որոնց ամուսին փոշիով սեցած զէմքերէն յաճախ արցունքները առուակներու նման գիծեր կազմած կը վազէին: Մեծ թիւով ապաշխարողներ եղան հոն եւ շատ չանցած Հուայթֆիլտ իր բացօդեայ քարոզութիւնները սկսաւ նաեւ Պրիսթօլի մէջ, ձեռք բերելով հոն հսկայ թիւով ապաշխարողներ: Հուայթֆիլտ կ'աճապարէր Ամերիկա վերադառնալէ առաջ Անգլիոյ ուրիշ մասերուն մէջ ալ քարոզել, եւ չուզելով այս նորադարձ հաւատացեալները առանց հովիւի թողուլ՝ կոչ ուղղեց ձան Ուէսլիի գալ եւ անոնց մէջ իր սկսած գործը շարունակել: Ուէսլիի նախ վարանեցաւ իր կղերամտութենէն խղճահարուած՝ չուզելով Աւետարանի քարոզութիւնը եկեղեցւոյ շէնքերէն դուրս հանել, բայց անմահ հոգիներու համար իր ունեցած մեծ սէրը իր կղերական մոլեռանդութեան յաղթեց: Ուստի ինք ալ առապարէզ իջաւ Աւետարանը ամբոխին տանելու հոն՝ ուր կարելի էր զանոնք գտնել:

Հոս կ'աւելենք միջանկեալ կերպով միջադէպ

մը պատմել Ուէսլիի մօրը կեանքէն երբ ձան դեռ մանուկ էր:

Սուսաննա Ուէսլիի մէջ աւետարանչութեան եռանդը արթնցաւ երբ Դանիացի միսիոնար Յիցընպալկի գործերը կարդաց: Բազմադամ ընտանիքի բազմազբաղ այս մայրը իր ամուսնոյն բացակայ եղած մէկ շրջանին սկսաւ քաջարար ժողովներ ընել կիրակի կէս օրէ ետքերը իր տան խոհանոցին մէջ: Ի սկզբան այս ժողովները մանկանց եւ սպասաւորներու համար էին, բայց զբոսայիտներ ալ խնդրեցին ներկայ ըլլալ, եւ մօտ ատենէն ունկնդիրներուն թիւը 200ի հասաւ: Պատուելիին փոխանորդը այս ժողովները եկեղեցական կանոններու հակառակ սեպելով պատուելիին բողոքեց խնդրելով զանոնք դադրեցնելու հրաման ղրկել իր կնոջ: Բայց պատուելին իր կնոջմէ իմացած ըլլալով թէ անոնք որքան օրհնաբեր կ'ըլլային շատերուն համար՝ մերժեց միջամտել եւ ժողովները շարունակուեցան ամբողջ թեմին մեծ օրհնութիւն ըլլալով:

Իր մօր կողմէ խոհանոցի մը մէջ եղած այս համեստ ժողովներուն յիշատակը անկասկած մեծ բաժն ունեցաւ յետագային ձան Ուէսլիի վրայ զայն կոյր մոլեռանդութենէ ազատելու եւ եկեղեցւոյ բեմերէն փողոցներ իջեցնելու Աւետարանին քարոզութեան համար:

Մտիկ ընենք ձան Ուէսլիի իր օրագրութենէն:

1739 Մարտ 31.— «Իրիկունը Պրիսթօլ հասայ եւ Մր. Հուայթֆիլտը տեսայ: Յաջորդ օրը կիրակի ան քարոզեց դաշտերուն մէջ. այս կերպ քարոզութիւնը ինծի այնքան տարօրինակ կ'երեւէր որ չէի կրնար զայն մտքիս հետ հաշտեցնել: Ամբողջ կեանքիս մէջ այնքան յամառօրէն կ'ապուած էի եկեղեցական կարգ ու Դանիոնի եւ վարչութեան՝ որ եկեղեցւոյ շէնքէն դուրս հոգիներու փրկուիլը զրեթէ մեղք կը սեպէի»:

Ապրիլ 1.— «Մը Հուայթֆիլտ մեկնած էր: Իրիկունը փողոցին մէջ խուսք մը ժողովուրդի՝ «Լեռան վրայի քարոզը» սկսայ բացատրել: (Բացօդեայ առաջին քարոզիս ինչ յարմար նախընկիղը էր այս, թէեւ կարճեմ թէ Յիսուսի աստիճան եկեղեցական շէնքեր կային):

Ապրիլ 2.— «Այսօր կէսօրէն յետոյ յօժարեցայ աւելի ոտորնախալ և քաղաքին մօտ բլուրի մը վրայէն 3000 հոգիներու փրկութեան բարիաւետիսը տուի: «Տէրը չը հոգին իմ վրաս է, վասնզի զիս օճեց աղքատներուն Աւետարան քարոզելու, զիս ղրկեց կոտրած սիրտ ունեցողները բժշկելու, զիս ինքներուն ազատութիւն եւ կոյրերուն տեսութիւն քարոզելու, հարստահարութիւն կրող»

ները ազատ թող տալու, Տէրոջը ընդունելի տարին քարոզելու» (Ղուկ. Դ. 18, 19): (Ոչ ոք պէտք է անգիտանալ թէ այս խօսքերը կատարուած են Քրիստոսի ճշմարիտ պաշտօնեաներէն իւրաքանչիւրին մէջ):

Ապրիլ 8.— Աստուան ժամը 7ին Պրիսթօլի մէջ մօտ 1000 հոգիի քարոզեցի եւ յետոյ 1500ի Քինկզվուտի մէջ: Աւետարանական մարգարէին լեզուով աղաղակեցի, «Ով բոլոր ծառուածներ, ջուրերուն եկէք, եկէք, առանց ստակի եւ առանց գնոյ՝ գինի ու կաթ ծախու առէք» (Եսայ. ԾԵ. 1): Կէսօրէ յետոյ Քինկզվուտի ուրիշ մէկ տեղւոյն վրայ 5000 հոգիներու մէջտեղ կեցայ եւ աղաղակեցի, «Եթէ մէկը ծախու է, թող Ինծի գայ ու խմէ: Ան որ Ինծի կը հաւատայ՝ ինչպէս Գիրքը կ'ըսէ, անոր փորէն կենդանի ջուրի գետեր պիտի բղխեն» (Յովհ. Է. 37, 38):

Մայիս 7.— «Կը պատրաստուէի Բէնսֆօրտ երթալ արտօնութիւն ստացած ըլլալով հոն եկեղեցիին մէջ քարոզելու՝ երբ հետեւեալ երկտողը ստացայ, «Յարգելի Տիար, մեր հովիւը լսած ըլլալով թէ դուք խենդեցիք էք, այլեւս չփափաքիր որ դուք իր եկեղեցիներէն ոեւէ մէկուն մէջ քարոզէք»:

Այսու ամենայնիւ ես նորէն Բէնսֆօրտ գացի եւ քաղաքէն կէս մղոն հեռաւորութեամբ տեղւոյ մը վրայ քարոզեցի «Քրիստոս մեր իմաստութիւնը, արդարութիւնը, սրբութիւնը եւ փրկութիւնը»:

Աստուած Իր ծառային պատգամները կը կրնաքէր Իր Հոգին թափելով քաղմաթիւ հոգիներով վրայ եւ Պենտեկոստէի օրերուն նման ի մէջ այլոց նաեւ «երիտասարդները տեսիլքներ կը տեսնէին ու ծերերը երազներ»: Այս ղէպքերուն արձագանքը ամէն տեղ կ'երթար եւ շատեր նա՝ մականերով կամ անհատական այցելութեամբ անոնց ստուգութիւնը եւ պատճառները կը հարցնէին: Ուէսլիի պատասխաններէն քանի մը տողեր կ'ուզենք հոս ամփոփել.—

«Մեր միջեւ խնդիրը զլիաւորաբար իրողութեանց շուրջ կը դառնայ: Դուք կը մերժէք ընդունիլ թէ Աստուած այս ժամանակիս մէջ այս գործերը կ'ընէ: Իսկ ես երկուքն ալ կը հաստատեմ՝ որովհետեւ այս բաները ես իմ ականջներովս կը լսեմ ու աչքերովս կը տեսնեմ: Ես շատ թուով անձերու մէկ վայրկեանի մէջ վախի, սարսափի եւ յուսահատութեան հոգիէն, սիրոյ, ուրախութեան եւ խաղաղութեան հոգիի փոխութիւն տեսած եմ. նաեւ մինչեւ այն ատեն իրենց վրայ տիրող մեղսալից փափաքէն՝ Աստուծոյ կամքը կատարելու սուրբ փափաքի փոխութիւնը:

Ասոնք իրողութիւններ են, որոնց աչքի եւ ականջի վկան եմ ես ամէն օր:

Գալով տեսիլքներու եւ երազներու՝ խնդիրը այս է, ես կը ճանչնամ շատեր որոնց մէջ այս մեծ փոփոխութիւնը յառաջ եկած էր երազի մը մէջ, կամ ալ խաչեալ եւ փառաւորեալ Քրիստոսի վրայ իրենց մտքին աչքերը սեւեռելով: Ահաւասիկ այս է իրողութիւնը. թող ամէն մարդ դատէ ինչպէս որ կ'ուզէ: Անոնց մէջ եղած այս փոփոխութեան փաստերը ոչ անոնց արցունքներ թափելն է, ո'չ նոպայով գետին իյնալը, ո'չ լացն ու աղաղակը. ասոնք չեն պտօղները, հապա անոնց ամբողջ կեանքի ընթացքն է՝ որ մինչ այն՝ չար էր ամէն ճամբաներով, բայց իրենց դարձի եկած ժամէն սուրբ, արդար եւ բարի եղան:

Ձեզի կրնամ ցուցնել զանոնք որ առիւծներ էին ու գառնուկներ դարձան. զանոնք որ արբեցողներ էին ու հիմա օրինակելիօրէն ժուժկալներ են. զանոնք որ պոռնիկներ էին ու հիմա կ'ատեն «մարմինէն ազատուած հանգերն ալ»: Ասոնք են իմ կենդանի ապացոյցներս, եւ անոնց համար ես ոտք կոխելով կը հաստատեմ թէ ինչպէս անցեալ ժամանակներու մէջ, հիմա եւս Աստուած մեղքերու թողութիւն եւ Սուրբ Հոգւոյ պարգեւը կուտայ մեզի եւ մեր սրբիներուն: Եթէ այս բաները այսպէս չեն՝ ես Աստուծոյ սուտ վկան գտնուած կ'ըլլամ, վասնզի Իր Հնորհքով ես այս բաները կ'ընեմ եւ անոնց համար կը վկայեմ»:

ՊԱՏԱՆԵԱՅ

ՕՐԻՆԱԿԵԼՈՒ ԱՐԺԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ



Խնամով փնտռէ յիշուած համարները եւ մտածէ անոնց վրայ:

Ատենոք «Եփես. Բ. 12»ի մէջ կը բնակէի եւ կը քալէի «Եփես. Բ. 2»ի համեմատ: Իմ ապրեւակերպս կը ներշնչուէր «Եփես. Բ. 3»էն, այնպէս որ բնականաբար կը հասնէի այն ահաւոր վիճակին որ նկարագրուած է «Եփես. Բ. 4»ի մէջ: Այն ատեն իրականացնելով «Հոով. Գ. 40-20»ի յուսահատական կացութիւնը, դարձայ ղէպի «Մատթ. 28»ը, որ զիս առաջնորդեց ղէպի «Կող. Ա. 13»-ի այն ատեն վերջնականապէս հաստատուե-

ցայ «Մաղ. 27. 10»ի վրայ: Հոն լսեցի «Յովհ. Ժ. 2»ի ինծի համար շինուած բնակարանին մասին՝ Անկէ որ կ'ապրի «Եբր. 7. 14»ի մէջ: Այն տունը որ ես կը փնտռէի, գտայ «Բ. Կոր. Ե. 1»ի մէջ: Տունը միայն մէկ դուռ մը ունի, որ գտայ «Յովհ. Ժ. 9»ի մէջ, եւ այս դռնէն է որ կը մըտցըւի «Մատթ. Է. 7»ի մէջ:

Իմ ներկայ հասցէս «Եփես. Բ. 6»ի մէջ է: Ամէն ով որ կ'ուզէ ինծի այցելել, զիս կրնայ գտնել շատ մը ուրիշներու հետ «Առակ. Ը. 34»ի մէջ: Ան որ կը փափաքի ինծի հետ խօսիլ, թող հաճի ինծի ուշադրութիւն ընել «Ղուկ. Ժ. 17»ի մէջ ըսուածին: Յետոյ, երբ «Ա. Թես. 7. 14, 15»ի մարգարէութիւնը իրականանայ, կը սպասեմ «Յայտ. ԻԲ. 1-5»ի մէջ փոխադրուելու, եւ ահա այն օրը «Յայտ. Ե. 9»ի նոր երգը պիտի երգեմ: Ամէն: Ալէլուիա:

ՄԱՆԿԱՆՅ ՍԻՒՆԱԿ

ՄԱՐԴՈՒՆ ՍԻՐՏԸ

Սիրելի մանուկներս,

Այս առթիւ կ'ուզէի հարցնել Ձեզ թէ արդեօք «Մարդուն Սիրտը» ծանօթ է Ձեզի:

Գրքոյկ մըն է ան 54 էջնոց, կանանչ գոյնով որուն կողքին առաջին էջին վրայ կը գտնուի պատկեր մը որ պատկերացունի է փրկուած սրտի մը: Հրեշտակ մը կայ անոր մէկ կողմը որ կը պահէ զայն, բայց միւս կողմն ալ չար եւ բանասարկու, խաբող եւ կորսնցնող Սատանան որ միշտ ջանք կ'ընէ խաբխափելու այդ նոյն սիրտը: Այս պատճառաւ մարդուն սիրտը իրաւամբ կոչուած է Ստուծոյ տունը կամ Սասանայի բոյնը, որ պարզուած է տասը պատկերներով:

Կ'արժէ կարգաւ այս պիւքը. տասը տարեկանէն վեր եղողներդ կրնաք արդէն հասկնալ: Ըսէք ձեր ծնողաց որպէսզի այդ գրքոյկը գնեն ձեզի համար, եւ դուք ալ գիրքը ձեռքերնիդ առած մանրամասնօրէն կարդացէք եւ ուսումնասիրեցէք պատկերները: Նպատակս չէ այդ գիրքը առնելու համար ձեր ծնողաց նոր ծախքի դուռ մը բանալ, հապա փափաքս է որ զայն ընէք ձեր զրազարանին առաջին գրքոյկներէն մին՝ զոր միշտ կրնաք զործածել, վստօյի անիկա ձեր սրտին իրական պատկերը պիտի ըլլայ մինչեւ վերջը: Ուսումնասիրեցէք զայն երկարատեան, սա գիտակցութեամբ թէ աշխարհի վրայ կայ երկու ճամ-

բայ: Տէր Յիսուս ըսաւ, «Լայն է այն դուռը ու ընդարձակ այն ճամբան որ դէպի կորուստ կը տանի», բայց «Նեղ է այն դուռը ու նեղուածք է այն ճամբան որ դէպի կեանք կը տանի»: Ուստի այս երկու ճամբաներն են կորստեան եւ կենաց ճամբաները: Այդ կորստեան ճամբան ներկայացուած է Ա. Զ. Է. Ը. պատկերներով: Դիտեցէք զանոնք հեղ մը եւ լաւ մը քննեցէք. նկատեցէք աստիճանական անկումը եւ վերջնական ահարկու եւ յաւիտենական կորուստը այն մարդուն որ լայն ճամբան կ'ընտրէ:

Իսկ Բ. Գ. Դ. Ե. Թ. Ժ. պատկերները ցոյց կու տան ապաշխարող եւ Յիսուսի հաւատքի կեանքին մէջ քալող մարդուն յառաջացող կեանքը եւ անոր զեղեցիկ մեկնումը այս աշխարհէն դէպի յաւիտենական հանգիստը երկինքի մէջ: Պատկերներուն մէջ կը գտնէք կենդանիներ, որոնք կը ներկայացնեն մեղքերու եւ ունակութեանց տեսակները, որոնք արդէն բացատրուած են զըրքին մէջ, նաեւ հոգեւոր կեանքի վերաբերող նշանները, ինչպէս հաւ ձուկ եւն:

Երբ դիտէք օձը, վագրը, գորտը, սիրամարդը եւն. ոտկումով պիտի լեցուիք եւ չպիտի հաւատաք թէ ձեր մէջ այդպիսի չար յատկութիւններ կրնան ըլլալ. բայց իրականութիւն է այս: Կան ամէնն ալ իրենց չափաւոր աստիճաններով, որոնք հետզհետէ պիտի մեծնան, զօրանան եթէ սնուցանենք զանոնք:

Աստուած ըսաւ, «Մարդուն սրտին խորհուրդը իր մանկութենէն չար է»: Ասիկա իրողութիւն մըն է եւ դուն սիրելի զաւակս, ասոր բացառութիւն չես կազմեր: Ուստի քեզի կ'իյնայ նախ տեսնել քու վիճակդ, տեսնել անոր շարունակութեան հետեւանքը, դարձի գալ, ապաշխարել եւ Յիսուսի հետ քաղցր կեանքը սկսիլ ու ապրիլ: Մի՛ ըսեր թէ չես հասկնար, հիմա դեռ կանուխ է, քանզի քեզմէ առաջ ապաշխարողներ եղած են, ու որքան շուտ ապաշխարես, որքան շուտ ընտրես Յիսուսը իբր քու բարեկամդ, առաջնորդդ եւ ընկերդ, այնքան մաքուր պիտի ըլլայ քու սիրտդ եւ սուրբ՝ նկարագրիդ, այնքան շուտ պիտի նմանիս Յիսուսի:

Ուրիշ առթիւ մը եթէ Տէրը կամի, ուրիշ զըրքի մը վրայ պիտի գրենք:

Ձեզ ամէնդ սրտանց սիրող եւ Ձեզի համար աղօթող

Խմբ. «ԲԱՆԲԵՐ»

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN & Cie, 39 Rue St - Sournin Marseille

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՍԻՒՆԱԿ

Յարմար սեպեցինք որ կողքին Գ. էջը այս նիւթին տակ «Բանբեր»ի ընթերցողներուն յատկացուի:

Ասոր տակ կ'երթան 1) Ձեր նամակներէն զընահատուածիւններ թերթի մասին: 2) Շինիչ թեւադրութիւններ, պիտի զորոնք հրատարակենք բոլոր ընթերցողներուն լսելի ընելու եթէ յարմար դատենք: 3) Հարցումներ անձնական կամ ընդհանրական, հոգեւոր կամ եկեղեցական, որոնց պիտի պատասխանենք սիրով: 4) Յօդուածներուն անունները որոնցմէ դուք մասնաւորապէս օրհնուեցաք, որոնք թերեւս ուրիշներու աչքէն վրիպեցան եւ վերջապէս Ձեր անդրադարձումին վրայ կրկին բանան թերթը, կարգան եւ օրհնութիւն: 5) Վերջապէս ինչ որ կը վերաբերի «Բանբեր»ի եւ իր ընտանիքին ընդհանուր շահերուն, պատրաստ պիտի ըլլանք զանոնք նկատի առնել եւ անոնց վրայ ուրիշ ընթերցողներու ուշադրութիւնը հրաւիրել եւ այսպէս միջ-ընթերցողական յարաբերութիւնը աւելի եւս պինդ բռնել:

Շատ ուրախալի պիտի ըլլար նաեւ լսել մօտ կամ հեռու գտնուող եղբայրներու եւ քոյրերու կենսադրութիւնները, կարդալով զիրար ճանչնալ եւ ի-արու համար ազօթել: Տէրը օգտակար ընէ այս կերպն ալ:

Արդ, խօսքը Ձեզի է:

Ջախներ հեռուէն ու մօտէն.—

«Յիրաւի կ'արժէ որ այս թերթը շատ հաւատացեալներ ստանան»:

«Ձեր խմբագրականը այս առաջին թիւին, խիստ օգտակար եւ շինիչ էր»:

«Կենսագրականներուն մէջ հաւատացեալներու հոմար շատ դասեր կային սորվելիք»:

«Ճան Ռէսլիի կենսագրականը հիացմամբ կը կարդամ եւ կ'օրհնուի»:

«Թարգմանութիւնները շատ ներշնչիչ եւ «Ուրիշներ կրնան դուն չես կրնար» նիւթով բացատրուած ճշմարտութիւնը այնքան սիրեցի եւ ազդուեցայ... ոչնչպէս թեւադրեցի ուրիշ հաւատացեալի մը որ ամէն օր կարդայ, քանզի ճիշդ այդ բանին պէտքը կ'զգար: Ան ալ կարդալէ յետոյ ուրիշի մը թեւադրեց ուշի ուշով կարդալ գայն: Այսպէս ընել յետ այսու մեզի յարմար երեւցաւ»:

«Եկեղեցի երթալէ կ'արգիլուիմ, ու շատերուն ալ ատելի եմ, Մատթ. Ժ. 22, բայց Ս. Գրքին հետ Բանբերը ունիմ եւ այսպէս կը լուսաւորուիմ»:

Միջ-ընթերցողական օժանդակուեցիւն

«Բանբերի կողքին վրայ կարդացի այն յուզիչ նամակը, որով Տէրոջը մէկ գաւազն իր հոգիին սնունդը էղող «Բանբեր» թերթը ունենալ կը փափաքի: Կը հասկնամ անոր հոգիին ծարաւը, ուստի պարտք կը սեպեմ անոր, կամ անոր նման եղբօր մը կամ քրոջ մը օգնել, զրկելով մէկ տարեկան բաժնեզին «Բանբեր»ի, յուսալով որ Աստուծոյ մէկ ծառային օգտակար կ'ըլլայ:

Ընդունեցէք այս փոքրիկ նուէրս, ասիկա դժբաժնի է ծխախոտիմ, զոր ապաշխարեւէս վերջը ձգած ըլլալով, անոր զինք ուրիշ օգտակար բաներու կը ծառայեցնեմ (Խմբ.— Յիրաւի սիկարէթի համար մսխուած զրամներուն զործածուելիք ինչ գեղեցիկ տեղ»:

«Այս ամսուայ «Բանբեր»ի կողքին նամակ մը կար, քոյր մը առաջնորդուած է այդ անձին «Բանբեր զրկել»:

«Բանբեր»ի կողքին վրայ նամակ մը գրուած էր անդամաւոյժ քրոջմէ մը. փափաքեցայ Տէրոջը ինծի տուածէն Զատիկուան առթիւ նուէր մը զրկել որ միւթաբուրի. քոյր մը յիշեց որ անոր օգնած է, եթէ նա կարօտութիւն չունի, անոր նման մէկը ուրախացուր» (Խմբ.— Շնորհակալութիւն այս սիրելի ընթերցողին, այո՛, ունինք շատեր, որոնք կը փափաքին կարդալ, անոնցմէ մէկուն պիտի յատկացնենք՝ զայն ուրախացնելով):

Ուրախութեամբ դեռ ուրիշ նուէրներ ալ պիտի ընդունէինք «Բանբեր»ը վճարելու անկարողներուն օգնելու:

«Առաջ ես կ'օգնէի ուրիշներուն եւ պէտք է որ օգնեմ անոնց, բայց ստիպուած եմ եղբայրական նուէրը ընդունիլ հակառակ իմ ներքին ամօթի զգացումներուս, միմիայն «Բանբեր»էս չզրկուելու համար»:

«Շնորհակալ եմ որ հակառակ երկու տարուան բաժնեզին չզրկուեալ, զիս «Բանբեր»ի օգտակար եւ ներշնչիչ գրութիւններէն չզրկեցիք»:

ՀԱՅ ԱՒԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷջ

(Շարամամիջի աղօթածողովներու մասին հարցնել տեղյն վրայ):

ՄԱՐՍԷՅԷ—Հովիտ (Վեր.) 3. Ն. Ղազարոսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 13 45ին քարոզածողով, 13 R. Delille
15 30ին աղօթածողով, 11, Rue de l'Eclipse

8. 30 ին կիր. դաս մեծերու » »

Մանկանց համար

Կիր. դասեր ժամը 9. 30ին քաղաքին մէջ

Սէն ժուլիէն եկեղեցւոյ աղօթատեղիին մէջ

Լէզ Օլիվ, Սէն Ժէրոմ, Ս. Միթր. Ալա, Պուլ-

վար Օոո մասնաւոր բնակարաններու մէջ:

Շարամամիջի ժողովներ

Բ. շր. ժամը 2ին Սէն Թ Անժուան,

Դ. շր. ժամը 2ին Սէն ժուլիէն եւ Լէզ Օլիվ

Դ. շր. 19 30ին քաղաքը 11, Rue de l'Eclipse

Ե. շր. ժամը 20ին Սէն Ժէրոմ

Ռ. շր. ժամը 20ին Camp Victor Hugo

Սէն ԼՈՒ.—Քարոզիչ Պատ. Վահան Սահակեան
Chapelle Evang. Arm. Bd. Escalon, St. Loup

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:

9. 30ին Ս. գրական ուսումնս

16 ին քարոզածողով:

Սէն Թ ՄԱՐԿՐԻԹ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԻՌԹԱ.— Քարոզիչ Պատ. Ս. Պագգալեան,
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով

Ֆրանս. եկեղեցիին մէջ:

15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը:

.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիտ Պատ. Ա. Փափազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս

10. 15 քարոզածողով

18. 30 աղօթածողով

ՍԷՆ ՓԻԷԼ.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:

16. 30 ին քարոզածողով եւ

աղօթածողով

ՄՕՆԹԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց

14ին քարոզ եւ աղօթածողով:

.....

ՎԱԼԱՆՍ.— Հովիտ Բրոշի. Գ. Գ. Խայիկեան
55 Ave. Jean Jaurès Bourg les Valenœ
(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս

եկեղեցի ին մէջ

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՕՆ—Հովիտ Պատ. Ժ. Պարուսեան,

18, Rue du Dr. Rebatel

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,

5 Cours Lafayette, 8 Passage Coste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւններու

ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,

15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով

Rue Lafayette.

ՓՕՆ ՏՐ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով

(15 օրը անգամ մը):

.....

ՍԷՆԹ ԷԹԻԷՆ—Քարոզիչ Պատ. Ի. Արրամեան
2. Place de la Pareille.

Կիր. ժամը 10. 30ին քարոզածողով

57 Rue de la République.

17ին աղօթածողով

Արմէ տիւ. Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով

Mairieի մէջ, Justice de la Paix սրահը

.....

ԲԱՐԻՋ— Հովիտ Պատ. Զ. Բ. Պատարեան,
10 bis Villa de la Gare, Vanves (Seine).

Կիր. ժամը 14 30ին քարոզածողով

37 Rue Tournesfort Paris 5^e

Metro Mouhe Aut. K

Ամսոյն Գ. կիրակին ժամը 16. 30ին Ե.

Ք. Ը. երկուսն միասին աղօթածողով

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով

ժամը 10ին կիրակնօրեայ դաս

59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulineaux

ԱԼՖՕՐՎԻԼ.— Քարոզիչ Պր. Մ. Վէֆիլեան

25 Rue Blanch, Alfortville

Կիր. ժամը 15. 30ին պաշտամունք

!! Rue des Brochets, Alfortville

Ժամը 4ին Կիր. դաս

Rédaction du "PANPÈRE"

7, Rue Papère - MARSEILLE (France)

Imp. Y. ARMEN & C^{ie}

39, Rue St-Savournin - MARSEILLE